

**Դատական գործ N: ՀՔԴ3/0398/02/08**

**Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:** 17-03-2008

<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն	Ռուզան
Ազգանուն	Սարյան
Հայրանուն	Լազարի
Հասցե	ՀՀ քաղաք Երևան, Սարյան փ, տուն 3
Սեռ	Իգական
Անձնագիր	ՌԴ 4508027119
Ում կողմից	772077

<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն	Կատարինե
Ազգանուն	Սարյան
Հայրանուն	Լազարի
Հասցե	ՀՀ քաղաք Երևան, Սարյան փ, տուն 3
Սեռ	Իգական
Անձնագիր	AB0417212
Ում կողմից	011

<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն	Սոֆյա
Ազգանուն	Սարյան
Հայրանուն	Լազարի
Հասցե	ՀՀ քաղաք Երևան, Սարյան փ, տուն 3
Սեռ	Իգական
Անձնագիր	AB 0229418
Ում կողմից	011

<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	ՀՀ, ք. Երևան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն 4 հարկ «Հարությունյան եւ գործընկերների իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ
Սեռ	Արական
Անձնագիր	AG0338790
Ում կողմից	004

<b>Պատասխանող</b>	
Անուն:	ՄԱՊ փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե:	ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Լեւուղի
Տիպ:	Առետրային /ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ, Ա/Կ եվ այլն/

**Ներկայացուցիչ**

Անուն	Վարդան
Ազգանուն	Խեչյան
Հայրանուն	Նորիկի
Հասցե	ՀՀ ք.Երեւան, Ավան Առինջ 2/11-44
Անձնագիր	AE0232285
Ում կողմից	038
<b>Քաղաքացիական գործի ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	Ոչ
<b>3-րդ անձ</b>	
Անուն	Արմեն
Ազգանուն	Ղուկասյան
Հասցե	ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջեւան, Բլբուլյան փող 79 շենք, 14 բն.
Սեռ	Արական
<b>Պահանջ:</b>	հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու եւ ստացված եկամուտները բռնագանձելու մասին
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	5.3
<b>Պետական տուրք:</b>	12000
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ պահանջ:</b>	
<b>Պետական տուրք:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	17-03-2008
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	Ռուբեն Էդուարդի Վարդազարյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	Ռուբեն Էդուարդի Վարդազարյան
<b>Որոշման ամսաթիվ:</b>	18-03-2008
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովում կիրառելու
<b>Բավ/մերժ:</b>	Մերժվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	18-03-2008
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	11-04-2008

<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	01-04-2008
<b>Այլ նշումներ:</b>	նախնական դատական նիստ
<b>Ժամ:</b>	11:00
<b>Ամսաթիվ:</b>	11-04-2008
<b>Միացվող գործի համարը:</b>	ՀԲԴ3/0398/02/08 եւ ՀԲԴ3/0419/02/08
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	89 Կետ 2,4
<b>Որոշման բովանդակությունը:</b>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը Քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու մասին</p> <p>11.04.2008թ. ք. Էջմիածին</p> <p>Հարավային քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ռ.Վարդապարյանի, քննարկելով թիվ ՀԲԴ3/0398/02/08 և թիվ ՀԲԴ3/0419/02/08 քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու մասին պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց Ի</b></p> <p>Հարավային քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում թիվ ՀԲԴ3/0398/02/08 քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուզան Լազարի Սարյանի, Կատարինե Լազարի Սարյանի, Սոֆյա Լազարի Սարյանի ներկայացուցչի՝ Ա. Պետրոսյանի ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին</p> <p>ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008թ. որոշումով բեկանվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-1361 քաղաքացիական գործով ըստ հայցի Արաքսի Սարյանի ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու մասին 01.12.2006թ. վճռիչը և գործն ուղարկվել է Հարավային քաղաքացիական դատարան նոր քննության:</p> <p>Հարավային քաղաքացիական դատարանը նշված քաղաքացիական գործը 02.04.2008թ. որոշումով վարույթ է ընդունել (քաղաքացիական գործ թիվ ՀԲԴ3/0419/02/08):</p> <p>Պատասխանողի ներկայացուցչի Վ.Խեչյանը 11.04.2008թ. դատական նիստին դատարանին ներկայացրեց միջնորդություն վերոնշյալ երկու քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու մասին պատճառաբանելով, որ երկու հայցադիմումների բովանդակությունը, նրանց մեջ ներառված «նախապատմությունը», «վեճի նկարագրությունը», «հայցապահանջը» վերտառությունները ակնհայտ է դառնում, որ այդ երկու գործերը միատեսակ են, երկու գործերով էլ որպես կողմ են հանդես գալիս Մ.Սարյանի ժառանգները և «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը: Ինչպես նաև ելնելով վեճի բովանդակությունից և երկու միմյանց հետ կապված, բայց առանձին-առանձին քննվող գործերով հակասական վճռիչներ կայացնելուց զերծ մնալու համար:</p> <p>Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և նկատի ունենալով, որ հարավային քաղաքացիական դատարանի վարույթում գտնվող թիվ ՀԲԴ3/0398/02/08 և թիվ ՀԲԴ3/0419/02/08 քաղաքացիական գործերը միատեսակ են, որոնց մասնակցում են միևնույն անձինք (թիվ ՀԲԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով հայցվորներ Ռուզան Լազարի Սարյանը, Կատարինե Լազարի Սարյանը, Սոֆյա Լազարի</p>

Սարյանը և թիվ ՀԳՂ3/0419/02/08 քաղաքացիական գործով հայցվոր Արաքսի Սարյանը 12.08.2003թ.՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն հանդիսանում են գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգներ) ուստի դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 89 հոդվածի 2-րդ կետի հիմքով միջնորդությունը ենթակա է բավարարման և այդ գործերը պետք է միացվեն մեկ վարույթում:  
 Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 89 հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, 144, 1491, 1492, 1495 հոդվածներով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Հարավային քաղաքացիական դատարանի վարույթում գտնվող թիվ ՀԳՂ3/0398/02/08 և թիվ ՀԳՂ3/0419/02/08 քաղաքացիական գործերը միացնել մեկ վարույթում և գործի քննությունը նշանակել 23.04.2008թ. ժամը 1100-ին Հարավային քաղաքացիական դատարանում (ՀՀ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Կամոյի 15):

Դատավոր՝ Ռ.Վարդազարյան

Են միեւնույն անձինք, ուստի դատարանը գտնում է, որ նշված քաղ.գործերը պետք է միացվեն մեկ վարույթում

Դատաքննության ամսաթիվ:	11-04-2008
Դատաքննության ամսաթիվ:	23-04-2008
Դատաքննության ամսաթիվ:	07-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	15-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	19-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	04-06-2008
Դատաքննության ամսաթիվ:	02-07-2008
Դատաքննության ամսաթիվ:	15-07-2008
Դատաքննության ամսաթիվ:	04-08-2008
Դատաքննության ամսաթիվ:	05-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	29-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	28-10-2008
Դատաքննության ամսաթիվ:	03-11-2008
Դատաքննության ամսաթիվ:	14-11-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-04-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	11-04-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-04-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-05-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	15-05-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-05-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	04-06-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-07-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	15-07-2008

Ծանուցագիրը ուղարկվել է:	04-08-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-09-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-09-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-10-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-11-2008
Այլ նշումներ:	նախնական դատական նիստ
Ժամ:	11:00, 11:00, 10:30, 14:30, 10:00,10:30, 10:30,10:30,10:30,11:30,10:30,10:30,10:30
Երբ:	15-05-2008
Հիմքը:	Կանխակալ վերաբերմունք
Ինքնաբացարկի նախաձեռնողը:	Կողմի միջնորդություն
Այլ նշումներ:	ինքնաբացաչկի միջնորդությունը մերժվել է
Ամսաթիվ:	19-05-2008
Ամսաթիվ:	13-11-2008
<b>Հիմքը</b>	
Հողված	ՀՀ քաղ դատ 10,150,106
Որոշման բովանդակությունը:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը Քաղաքացիական գործի վարույթը կատեցնելու մասին</p> <p>13.11.2008թ. ք. Էջմիածին</p> <p>ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի դատավոր Ռ.Վարդազարյանս, քննարկելով թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով ըստ հայցի Արաքսի Սարյանի, Ռուզան Լազարի Սարյանի, Կատարինե Լազարի Սարյանի, Սոֆյա Լազարի Սարյանի ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ 1.արգելել «ՄԱՊ» ՓԲԸ-ին Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմենիա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրանքի արտադրումը և իրացումը արգելելու, «ՄԱՊ» ՓԲԸ-ին պարտավորեցնել սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմենիա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, «ՄԱՊ» ՓԲԸ-ից բռնագանձել և ոչնչացնել Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմենիա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, զովագոյային նյութերը և արտադրության միջոցները պահանջների մասին հայցվորների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի 04.11.2008թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացրած վերաքննիչ բողոքը</p> <p>Պ Ա Ր Ջ Ե Ց Ի</p> <p>15.05.2008թ. նշանակված նախնական դատական նիստին հայցվորների ներկայացուցիչ Հ.Հարությունյանը միջնորդություն է ներկայացրել ինքնաբացարկ հայտնելու մասին, որում</p>

պատճառաբանել է, որ համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 91 հոդվածի դատավորը պարտավոր է ինքնաբացարկ ախտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97 հոդվածի 2-րդ մասի հայցի ապահովման միջոցի մասին միջնորդությունը քննարկվում է այն ստանալու օրը և կայացվում է որոշում: Մինչդեռ դատարանը հետաձգել է որոշման քննարկումը տալով պատասխանող կողմին առավելություններ, քանի որ օբյեկտիվորեն բխում է վերջինիս շահերից: Ի հակասություն օրենքի հստակ շարադրված պահանջի և դրա հիման վրա հայցվորի առարկությունների կայացրած որոշումը հարուցում է ողջամիտ կասկածներ նախագահող դատավորի անկողմնակալության մեջ: Խնդրեց հայտնել բացարկ: Դատարանը գտնելով միջնորդությունը անհիմն, այն մերժել է հետևյալ պատճառաբանությամբ.

Միջնորդության մեջ մատնանշված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում, և մջնորդությունը չի բխում ՀՀ դատական օրենսգրքի 91 հոդվածով սահմանված ինքնաբացարկ հայտնելու սահմանված պահանջներից: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետի՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Հայստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլոց այն դեպքերը, երբ. 1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, 2) դատավորը որպես մասնավոր անձ ականատես է այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում. 3) դատավորը կամ նրա անուսինը, կամ նրանց հետ արյունակցական մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ, կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Վետազայուն՝ ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի կողմից վերը նշված քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում դատարանը իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1498 հոդվածով նախատեսված՝ գործի արդյունավետ քննությանն ուղղված բոլոր գործողությունները, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, 03.10.2008թ թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով նշանակել է դատաքննություն՝ 14.11.2008թ. ժամը 1030-ին:

12.11.2008թ. ՀՀ հարավային քաղաքացիական դատարան մուտքագրվել է ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ հայցվորների ներկայացուցիչ Ա.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106 հոդվածի 3-րդ կետը՝ դատարանը կարող է գործի վարույթը կասեցնալ նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10 և 105 հոդվածներով դատարանը գտավ, որ գործի վարույթը պետք է կասեցնել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10, 150, 106, 144, 1493, 1494 հոդվածներով դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել, մինչև քաղաքացիական դատավարության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշում կայացնելը:

**Ուր է ուղարկվել:** Դատավոր՝ Ռ.Վարդազարյան  
**Երբ:** ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան  
19-11-2008

**Ամսաթիվ:** 19-11-2008  
**Էջերի քանակը:** 238էջ, 206էջ,80էջ,199էջ,179էջ  
**Գործին կից նյութերը:**  
**Գործն ուղարկվել է:** 19-11-2008  
**Ուր:** Քաղաքացիական վերաք.  
**Գրության համարը:** ԴԴ-12/Ե-2798  
**Այլ նշումներ:**

**Ամսաթիվ:** 27-11-2008

**Դատական Գործ N: ՀՔԴ3/0398/02/08**

**Ամսաթիվ:** 04-11-2008

**Բողոք բերող անձը**

**Անուն** Արաքսի, Կատերինե, Ռուզան, Սոֆյա  
**Ազգանուն** Սարյաններ  
**Հասցե** Սարյան 3 տուն

**Ներկայացուցիչ**

**Անուն** Արթուր  
**Ազգանուն** Պետրոսյան  
**Հասցե**

**Ուն կողմից է բերվել բողոքը:** Հայցվորի ներկայացուցիչ  
**Պետական տուրք:** 10000

**Պատասխանի ստացման ամսաթիվը:**

**Պատասխան բերող անձը**

**Անուն**  
**Ազգանուն**  
**Հասցե**

**Բողոքարկվող դատական ակտը:** 1905.08 ինքնաբացարկը մերժվել է  
**Գործի համարը:** ՀՔԴ3/0398/02/08

Ամսաթիվ:	21-11-2008
Վիճակագրական տողի համարը:	5.3
Գործի համարը:	ՀՔՂ3/0398/02/08
Գործը բաղկացած է (հատուոր / էջերի քանակ):	238էջ, 206էջ,80էջ,199էջ,179էջ
Ամսաթիվ:	21-11-2008
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Վարդան Ավանեսյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	25-11-2008
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	213
Ամսաթիվ:	16-12-2008
էջերի քանակը:	238+206+80+199+179+27
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	18-12-2008
Ամսաթիվ:	19-05-2009
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն	Արաքսի, Ռուզան, Կատարինե, Սոֆյա
Ազգանուն	Սարյաններ
Հասցե	ՀՀ քաղաք Երևան,Սարյան փ,տուն 3
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Հայկ
Ազգանուն	Հարությունյան
Հասցե	
Սեռ	Արական
Ուն կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	

<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Բողոքարկվող դատական ակտը:</b>	14.05.09 Մերժել
<b>Գործի համարը:</b>	ՀՔԴ3/0398/02/08
<b>Ամսաթիվ:</b>	29-05-2009
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	5.3
<b>Գործի համարը:</b>	ՀՔԴ3/0398/02/08
<b>Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):</b>	
<b>Ամսաթիվ:</b>	01-06-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Լևոն Գրիգորյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	29-05-2009
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	144, 213
<b>Ամսաթիվ:</b>	08-06-2009
<b>Էջերի քանակը:</b>	1-ին հատորը՝ 238, 2-րդը՝ 206, 3-րդը՝ 80, 4-րդը՝ 199, 5-րդը՝ 179, 6-րդը՝ 79, 7-րդը՝ 153, 8-րդը՝ 26 թերթ
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	15-06-2009
<b>Ուր:</b>	Վճռաբեկ
<b>Գրության համարը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	13-01-2010
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն	Արաքսի, Ռուզան, Կատարինե, Սոֆյա
Ազգանուն	Սարյաններ
Հասցե	
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	
<b>Ուն կողմից է բերվել բողոքը:</b>	Հայցվորի ներկայացուցիչ

Պետական տուրք:	4000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	
Գործի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Ամսաթիվ:	18-01-2010
Վիճակագրական տողի համարը:	5.3
Գործի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	9հ,1՝238թ,2՝206թ,3՝80թ,4՝199թ,5՝179թ,6՝79թ,7՝153թ,8՝47թ,9՝95թ
Գործը ստացվել է:	Արմավիրի մարզ
Ամսաթիվ:	19-01-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Ամրահի Սուրենի Պետրոսյան
Երբ:	22-01-2010
Որոշումը ուղարկվել է կողմերին:	22-01-2010
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	22-01-2010
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	321
Ամսաթիվ:	05-04-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	321
Ամսաթիվ:	04-05-2010
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	Գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության
Դատական ակտը բեկանվել է մասնակի:	
Այլ նշումներ:	

**Դատական ակտ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի  
01.12.2009 թվականի թիվ ՀՔԴ3/0398/02/08 վճիռ  
դատավոր՝ Վ.Խալաթյան Գործ թիվ ՀՔԴ3/0398/02/08

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը /այսուհետև՝  
Վերաքննիչ դատարան/

նախագահությամբ Ա.Պետրոսյանի  
մասնակցությամբ Ն.Տավարացյանի  
Ս.Միքայելյանի

2010 թվականի մայիսի 04-ին,

դռնբաց դատական նիստում քննելով Արաքսի, Ռուզան, Կատարինե  
և Սոֆյա Սարյանների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի  
վերաքննիչ բողոքը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության  
դատարանի /այսուհետև՝ դատարան/ 01.12.2009 թվականի թիվ  
ՀՔԴ3/0398/02/08 վճռի դեմ՝ ըստ հայցի Արաքսի Սարյանի ընդդեմ  
"ՄԱՊ" ՓԲ ընկերության, երրորդ անձ Արմեն Դուկասյանի՝  
կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի  
օգտագործմամբ ստացված եկամուտները բռնազանձելու, ինչպես  
նաև ըստ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցի ընդդեմ  
"ՄԱՊ" ՓԲ ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը  
դադարեցնելու պահանջների մասին.

**Պ Ա Ր Զ Ե Ց**

1. Դատավարական նախապատմությունը  
Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը  
25.05.2006թ-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Տնտեսական  
դատարան ընդդեմ "ՄԱՊ" ՓԲԸ-ի կոնտրաֆակտի օգտագործումն  
արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված  
եկամուտները բռնազանձելու պահանջի մասին:  
ՀՀ Տնտեսական դատարանի 29.05.2006թ. որոշմամբ հայցադիմումն  
ընդունվել է վարույթ և 15.06.2006թ. որոշմամբ, քաղաքացիական  
գործն ըստ ընդդատության հանձնվել է ՀՀ Արմավիրի մարզի  
առաջին ատյանի դատարանին :  
Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը 2006թ.  
դեկտեմբերի 1-ի վճռով Արաքսի Սարյանի հայցը մերժել է:  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 11.03.2008թ.  
որոշմամբ բեկանել է Արմավիրի մարզի առաջին ատյանի  
դատարանի 01.12.2006թ. վճիռը և գործն ուղարկել է ՀՀ հարավային  
քաղաքացիական դատարան՝ նոր քննության:  
ՀՀ հարավային քաղաքացիական դատարանը 02.04.2008թ. գործն  
ընդունել է վարույթ:  
Ռուզան Լազարի Սարյանը, Կատարինե Լազարի Սարյանը և Սոֆյա  
Լազարի Սարյանը 12.03.2008թ. հայցադիմում են ներկայացրել  
հարավային քաղաքացիական դատարան ընդդեմ "ՄԱՊ" ՓԲԸ-ի՝  
հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված  
եկամուտները բռնազանձելու մասին:  
ՀՀ հարավային քաղաքացիական դատարանը 18.03.2008թ.  
որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ և 11.04.2008թ.  
որոշմամբ թիվ ՀՔԴ 3/0398/02/08 և թիվ ՀՔԴ3/0419/02/08

քաղաքացիական գործերը միացրել է մեկ վարույթում:  
Հարավային քաղաքացիական դատարանի 28.10.2008թ. որոշմամբ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործից առանձին վարույթում է առանձնացվել "ՄԱՊ" ՓԲ ընկերության կողմից Մ. Սարյանի "Աշնանային մառախլապատ օր" և "Երեկո: Արարատ" ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողությամբ երեք տարեկան "Արմավիր", երեք տարեկան "Արմինա", հինգ տարեկան "Արմինա" և յոթ տարեկան "Արմինա" անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը /հասույթը/ պատասխանող "ՄԱՊ" ՓԲ ընկերությունից հօգուտ հայցվորների բռնագանձելու պահանջը:

Հարավային քաղաքացիական դատարանը 13.11.2008թ. որոշմամբ թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործի վարույթը կասեցրել է, մինչև քաղաքացիական դատավարության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշում կայացնելը /ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ/:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 25.11.2008թ.

որոշմամբ վերադարձրել է հարավային քաղաքացիական դատարանի 19.05.2008թ. որոշման դեմ վերաքննիչ բողոքը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոքը:

ՀՀ դատական դեպարտամենտի թիվ դդ-2 Ե-934 17.03.2009թ.

գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.02.2009թ. ընդունած "Հայաստանի հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ մասը, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ուղարկվել հարավային քաղաքացիական դատարանի թիվ ԼՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործն ըստ հայցի Արաքսի, Ռուզան, Կատարինե Սարյանների ընդդեմ "ՄԱՊ" ՓԲ ընկերության հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին հետագա ընթացքը լուծելու համար:

Դատարանը 19.03.2009թ. որոշմամբ թիվ ՀՔԴ 3/0398/02/08

քաղաքացիական գործի կասեցված վարույթը վերսկսել է:

Դատարանը 01.12.2009թ-ին մերժել է Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ "ՄԱՊ" ՓԲ ընկերության, երրորդ անձ Արմեն Ղուկասյանի՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու, ինչպես նաև Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ "ՄԱՊ" ՓԲ ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու պահանջների մասին:

Վճռի դեմ Վերաքննիչ բողոք է ներկայացրել Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը:

"ՄԱՊ" ՓԲԸ-ն 01.02.2010թ. ներկայացրել է Վերաքննիչ բողոքի պատասխան:

2. Վերաքննիչ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը Վերաքննիչ բողոքի քննության համար ներկայացրել է հետևյալ հիմքերը և հիմնավորումները.

Դատարանը հայցը մերժել է այն հիմքով, որ հայցվորի կողմից վկայակոչված հայցը հիմնավորող հանգամանքները գործում առկա ապացույցներով չեն հիմնավորվում:

Նշված հիմքով հայցը մերժելով Դատարանը վճռի հիմքում դրել է միայն ԳԱԱ "Փորձաքննությունների ազգային բյուրո" ՊՈԱԿ-ի կողմից իրականացված մշակութաբանական փորձաքննության եզրակացությունը (այսուհետ՝ եզրակա-ցություն):

1. Ապացույց հանդիսացող Եզրակացությունը ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, հետևաբար այն չպետք է դիտվեր որպես թույլատրելի ապացույց և չպետք է դրվեր վճռի հիմքում:

Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 28.02.2007թ. կայացրել է կրկնակի մասնագիտական արվեստաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, որով փորձագետներին առաջադրել է հետևյալ հարցերը՝ ա/ "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված "Արմինա" 7 տարեկան 0.5 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվել է արդյոք Մարտիրոս Սարյանի 1958թ-ին ստեղծված "Երեկո Արարատ" և "Հայաստան" ստեղծագործությունները: Բ/ "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված "Արմավիր" 0.7 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվել է արդյոք Մարտիրոս Սարյանի 1928թ-ին ստեղծված "Աշնանային մառախլապատ օր" գեղանկարը:

Եզրակացության 4-րդ էջում "Փորձագետի պարզաբանման համար առաջադրված հարցերը" բաժնում նշված է այն հարցը, որի վերաբերյալ փորձագետները տվել են իրենց եզրակացությունը, այն է՝ "Ինչ աստիճանի է օգտագործվել Մարտիրոս Սարյանի 1958թ-ին ստեղծված "Երեկո Արարատ", 1928թ-ի ստեղծված "Աշնանային մառախլապատ օր", "Հայաստան" գեղանկարները որոշման մեջ նշված պիտակներում": Փորձաքննություն նշանակելու որոշմամբ առաջադրված հարցի փոփոխման համար փորձագետները հիմք են ընդունել դատավոր Թումանյանի 28.04.2007թ. գրությունը:

Փորձագետին պարզաբանման ենթակա հարցերը պետք է առաջադրվեն գրավոր որոշմամբ, հետևաբար որևէ հարց փոխելու պարագայում դատարանը նույնպես պետք է կայացնի գրավոր որոշում: Նշվածից էլ բխում է, որ փորձագետին առաջադրված հարցերը չեն կարող սահմանվել կամ փոփոխվել գրությամբ: Բացի այդ, եթե անգամ ընդունենք, որ հարցերը կարող են փոխվել նաև գրությամբ, ապա, քանի որ վերաքննիչ դատարանում գործը քննվել է երեք դատավորի կազմով, ապա այդ գրությունը պետք է ստորագրված լինի բոլոր դատավորների, այլ ոչ միայն մեկ դատավորի կողմից:

Տվյալ պարագայում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. կրկնակի մասնագիտական արվեստաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրված հարցերը փոփոխող դատարանի որևէ որոշում չկա: Առկա է միայն դատավոր Թումանյանի կողմից ստորագրված գրություն, որում շարադրված է որոշման մեջ նշված հարցերից տարբերվող հարց: Սակայն փորձագետները որոշմամբ առաջադրված հարցերին այդպես էլ չեն պատասխանել, ինչից հետևում է, որ դատարանի որոշումը մնացել է չկատարված, իսկ նշված եզրակացությունն էլ չի կարող դիտվել որպես թույլատրելի ապացույց:

Նման պայմաններում գտնում ենք, որ Դատարանը փորձագետների նշված եզրակացությունը պետք է գնահատեր որպես օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույց և այն չպետք է դնել վճռի հիմքում: Հետևաբար, նշված եզրակացությունը համարելով որպես թույլատրելի ապացույց և դնելով այն վճռի հիմքում դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի 2 մասի խախտում, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Նշված փաստարկները ներկայացրել են նաև առաջին ատյանի դատարանին: Դատարանը սահմանափակվել է դրանք վճռի նկարագրական մասում մեջբերելով և որևէ գնահատական հայցվորի այդ դիրքորոշմանը և փաստարկներին չի տվել, ինչը վկայում է այն մասին, որ դատարանը գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ապացույցների գնահատում չի իրականացրել, ինչը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի խախտում:

2. Անտեսելով դատավարության օրենսգրքի պահանջները փորձագետներից ոչ մեկը հայցվորին կամ վերջինիս ներկայացուցիչներին փորձաքննության կատարման վայրի և

ժամանակի մասին չի ծանուցել և փորձաքննությանը մասնակից չի դարձրել:

Փորձագետների կողմից թույլ տրված վերը նշված խախտման հետևանքով Հայցվոր կողմը զրկված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 23-ով, 60-ով և 61-ով նախատեսված գործին մասնակցող անձանց իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Մասնավորապես, Հայցվոր կողմը հնարավորություն չի ունեցել հարցեր տալ փորձագետներին գիտելիքների համապատասխան բնագավառում նրանց գիտակ լինելը պարզելու համար, հնարավորություն չի ունեցել հիմքերի առկայության դեպքում բացարկ հայտնել վերջիններին: Մինչդեռ դատարան հրավիրված փորձագետների հարցաքննությունից պարզ դարձավ, որ փորձագետները մասնագիտացած են ստեղծագործությունների նույնականացման վերաբերյալ փորձաքննություններ իրականացնելու մեջ: Այսպես, ինչպես նշել են փորձագետները, իրենք փորձաքննություն իրականացնելիս կիրառել են այնպիսի մեթոդներ, որոնք կիրառվում են ստեղծագործության նույնականությունը, այսինքն՝ կրկնօրինակը բնօրինակից տարբերելու համար, որոնք սույն փորձաքննության իրականացման համար կիրառելի չեն (օրինակ "կոնստրուկտիվ վերլուծություն" մեթոդը, գույների և ֆիզիկական չափերի համեմատությունը, անգամ հաշվի են առել Սարյանի վրձնահարվածների առանձնահատկությունները և այլն): Եթե հայցվորները հնարավորություն ունենային մինչև փորձաքննության իրականացումը պարզել նշված հանգամանքները, ապա վերջիններս առնվազն բացարկ կհայտնեին այդ փորձագետներին, ինչպիսի հնարավորությունից վերջիններս տվյալ պարագայում զրկված են եղել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույց համարվող փորձագիտական եզրակացությունը ձեռք է բերվել օրենքի պահանջների և հայցվորների իրավունքների խախտմամբ, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 47-ի մաս 2-ի համաձայն վերջինս իրավաբանական ուժ չունի և չի կարող դրվել վճռի հիմքում: Հետևաբար, Եզրակացությունը դնելով վճռի հիմքում դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի, 53-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Ավելին, փորձաքննություն նշանակելու և անցկացնելու պահին որպես հայցվոր հանդես է եկել միայն Արաքսի Սարյանը, իսկ ներկայումս գործով որպես համահայցվորներ հանդես եկող Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյաններն այդ ժամանակ գործին մասնակցող անձ չեն եղել և բնականաբար փորձաքննությանը ներկա զտնվելու հնարավորություն չեն ունեցել (վերջիններս առանձին հայց են ներկայացրել "ՄԱՊ" ՓԲԸ-ի դեմ, որը Արաքսի Սարյանի հայցի հիման վրա քննվող գործի հետ միացվել է մեկ վարույթում):

3. Փորձագետի եզրակացությունը թույլատրելի ապացույց ընդունելու պարագայում դատարանը պարտավոր էր գնահատել այն, ինչը չի արվել: Դատարանը որևէ ապացույց, այդ թվում և փորձագետի եզրակացությունը վճռի հիմքում դնելու համար պարտավոր է այն գնահատել, պարտավոր է պարզել, թե արդյոք այդ ապացույցը գործով ապացուցման ենթակա որևէ հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը հաստատում է, թե ոչ, արդյոք այդ ապացույցը հանդիսանում է թույլատրելի ապացույց և արդյոք այն արժանահավատ է և ունի ապացուցողական ուժ: Դատավարության օրենսգրքի 131 հոդվածի 1 մասի 1 կետի համաձայն դատարանը ապացույցները պարտավոր է գնահատել վճիռ կայացնելիս : Դատարանը խախտելով վերը նշված նորմերի պահանջները փորձագետների եզրակացությունը որևէ կերպ չի գնահատել, այլ ընդամենը սահմանափակվել է նշելով, որ առկա է նման եզրակացություն:

4. Դատարանը վճռի հիմքում դրել է միայն Եզրակացությունը, առանց գործում առկա այլ ապացույցներին, հայցվորի ներկայացրած փաստարկներին և բացատրություններին անդրադառնալու և դրանք միմյանց հետ համադրելու, ինչը նույնպես հանդիսանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 53-ի խախտում, ինչպես նաև հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշմանը, որի համաձայն "ցանկացած ապացույց, թեկուզև այն առաջին հայացքից հեղինակավոր կամ անհամոզիչ թվա, կարող է գործի փաստական հանգամանքներից ելնելով, ընդունվել կամ մերժվել դատարանի կողմից: Այսպիսով, այն հարցը, թե դատական նիստում հետազոտված ապացույցներից որն է հիմնավոր, հավաստի, թույլատրելի, վերաբերելի կամ ոչ, դատարանը որոշում է իր ներքին համոզմամբ, որը ձևավորվում է բոլոր ապացույցների ամբողջական հետազոտման և գնահատման արդյունքում":

Կրասկան ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացված վճռում (19.04.1993 թվական) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը դատարանին "պարտավորեցնում է" կատարել կողմերի ներկայացրած բացատրությունների, փաստարկների և ապացույցների պատշաճ հետազոտում... :

Այսպես, Եզրակացությունը վճռի հիմքում դնելիս դատարանը պարտավոր էր այն գնահատել, իսկ գնահատելիս պետք է հետազոտեր և գնահատեր նաև գործում առկա այլ ապացույցները, փորձագետի պարզաբանումները, կողմերի բացատրությունները և դիրքորոշումը: Մասնավորապես, դատարանի որոշմամբ՝ եզրակացության վերաբերյալ պարզաբանումներ տալու համար դատական նիստին էին հրավիրվել փորձաքննություն անցկացրած փորձագետները, որոնք գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող պարզաբանումներ են կատարել Եզրակացության վերաբերյալ: Փորձագետ Սարուխանյանը հստակ ընդունել է, որ առանց Սարյանի ստեղծագործությունների օգտագործման պիտակների պատկերները նման տեսքով ստեղծված լինել չէին կարող:

Կարծում ենք, որ փորձագետի նշված ցուցմունքը բավարար է Եզրակացությունը որպես ոչ արժանահավատ ապացույց գնահատելու համար, քանի որ եթե առանց Սարյանի ստեղծագործության պիտակն այդ տեսքով չէր կարող ստեղծվել, ապա դա նշանակում է, որ Սարյանի ստեղծագործությունների օգտագործումն եղել է ոչ թե աննշան (ինչպես նշված է եզրակացության մեջ), այլ՝ էական: Սակայն, Դատարանը փորձագետի վերը նշված պարզաբանումը և գործում առկա այլ ապացույցներն առհասարակ հաշվի չի առել, ինչպես նաև գործում առկա գրավոր ապացույցների, փորձագետների պարզաբանումների, հայցվորի բացատրությունների, փաստարկների ամբողջական հետազոտություն և գնահատում չի իրականացրել, այլ միայն բավարարվել է այդ բացատրությունները և փաստարկները վճռի նկարագրական մասում շարադրելով:

5. Բացի այդ, դատարանը գործի ամբողջական քննություն չի իրականացրել և պահանջի հիմքում ընկած ոչ բոլոր հանգամանքներին է անդրադարձել: Հայցի հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ Պատասխանող ընկերության կողմից օգտագործվել է նաև "Արմենիա" ստեղծագործությունը, որին դատարանը չի անդրադարձել:

Ելնելով վերոգրյալից բողոք բերող անձինք խնդրել են ամբողջությամբ բեկանել դատարանի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.

"ՄԱՊ" ՓԲԸ-ն վերաքննիչ բողոքի պատասխանով հայտնել է, որ դատարանը վճռի 11-րդ էջում, բացի բողոքում հիշատակված փորձագիտական եզրակացությունից գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի և դրանց հաստատող ապացույցների ցանկում հետագոտել և գնահատել է գրավոր փաստաթղթերը / Արաքսի Սարյանի 25.05.2006թ. ներկայացրած հայցադիմումը, հայցի վերաբերյալ "ՄԱՊ" ՓԲ Ընկերությունը ներկայացրած հայցադիմումի պատասխանը, "Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն" ՊՈԱԿ թիվ 03538 և թիվ 03539 փորձաքննությունների եզրակացությունները, Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006թ. վճիռը, հայցվորներ Ռուզան Լազարի Սարյանի, Կատարինե Սարյանի, Սոֆյա Սարյանի 17.03.2008թ. հայցադիմումն ընդդեմ "ՄԱՊ" ՓԲԸ-ի՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջով, 12.08.2003թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, "ՄԱՊ" ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վ. Խեչյանի հայցադիմումի պատասխանը/:

Դատարանը իրավական վերլուծություն է կատարել, հետագոտելով գործով ներկայացված յուրաքանչյուր ապացույց, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և գտել է, որ հայցը ենթակա է մերժման:

Բողոքաբերը վերաքննիչ բողոքում չի նշել, թե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հատկապես որ փաստին /փաստերին/ Դատարանը ուշադրություն չի արժանացրել :

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննելիս չպետք է անդրադառնա բողոքաբերի այն փաստարկին, որ դատավորի գրությամբ փորձագետին առաջադրված հարցերը չեն կարող փոխվել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի չորրորդ բաժինը սահմանում է առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոք բերելու իրավագրությանը, բողոքի նշված հիմքն իր մեջ պարունակում է զուտ ձևական նկատառումներ և այն չի կարող ըստ էության ճիշտ վճռի բեկանման հիմք հանդիսանալ:

Փորձագետին ուղղված հարցերը շատ բազմիմաստ էին և միանշանակ պատասխանել դրանց չէր կարելի, հետևաբար փորձագետները 30.03.2007թ-ին միջնորդությամբ դիմել են ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա. Թումանյանին վերոնշյալ հարցերը հստակեցնելու և պարզաբանելու խնդրանքով: Այդ միջնորդության վերաբերյալ փորձագետները մանրամասն արձանագրել են փորձագիտական եզրակացության 2-3 էջերում : Դատավոր Ա. Թումանյանի նախագահությամբ դատարանը 16.04.2007թ-ին որոշում է կայացրել քաղաքացիական գործի վարույթը կասեցումից հանելու և վերսկսելու մասին ու գործի քննությունը նշանակել է 2007թ-ի ապրիլի 26-ին, ժամը 15:30-ին: Դատաքննության ժամանակ փորձագետին պարզաբանման համար առաջադրված հարցը վերածնակերպվել է, ինչի հետ համաձայնել են դատավարական կողմերի ներկայացուցիչները, հանձինս հայցվորի ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանի և Արթուր Պետրոսյանի, հետևյալ բովանդակությամբ.

1. Ինչ աստիճանի են օգտագործվել Մարտիրոս Մարյանի 1958թ-ին ստեղծված "Երեկո: Արարատ", 1928թ.-ի "Աշնանային մառախլապատ օր", "Հայաստան" գեղանկարները որոշման մեջ նշված պիտակներում:

Ինչ վերաբերվում է փորձաքննությանը կողմերին ծանուցելու բողոքի փաստարկներին, ապա չկա որևէ իրավական նորմ, որով կարգավորվում են այդ իրավահարաբերությունները:

Հատկանշական է, որ արվեստաբանական փորձաքննության յուրահատկությունից ելնելով, այն դասվում է այն փորձաքննությունների դասին, որտեղ կողմի մասնակցությունը կարող է խոչընդոտել փորձաքննության բնականոն ընթացքին եւ լրացուցիչ բարդություններ առաջացնել:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի կասկածներին փորձագետների մասնագիտական ունակությունների եւ արվեստաբանական փորձաքննություն կատարելու ասպարեզում նրանց գիտակ լինելը կասկածի տակ դնելու հանգամանքին, ապա նրանց գիտելիքները կասկած չպետք է հարուցեն բողոքաբերի մոտ , քանի որ մշակութաբանական փորձաքննության եզրակացության 2-րդ էջում նշված են այն բոլոր տեղեկությունները փորձաքննությունը կատարող փորձագետների մասին և բացի դա, բողոքաբերը հենց ինքն է միջնորդել դատարանին, որպեսզի արվեստաբանական փորձաքննությունը իրականացվի հիշատակված հաստատության փորձագետների կողմից:  
Բողոքաբերի այն պնդումը, որ դատարանը չի հետազոտել գործում եղած ապացույցները, նույնպես անհիմն է, քանի որ դատաքննության ավարտից հետո դատավորը բավականին երկար ժամանակ է հատկացրել գործում եղած գրավոր փաստաթղթերի հետազոտությանը :  
Ելնելով վերոգրյալից, խնդրել են վերաքննիչ բողոքը մերժել և վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ բողոքի քննության համար հիմք հանդիսացող փաստերը.

Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը 28.02.2007 թվականին դատական նիստի ընթացքում ներկայացրել է միջնորդություն փորձաքննություն նշանակելու վերաբերյալ և փորձագետին առաջադրել հետևյալ հարցը. << "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված <<Արմինա 7 տարեկան>> 0.5 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվե՞լ է արդյոք Մարտիրոս Սարյանի 1958թ. ստեղծած << Երեկո:Արարատ>> և <<Հայաստան>> ստեղծագործությունները>>: /հ.2, գ.թ. 32/

<< քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 28.02.2007 թվականին որոշում է կայացրել կրկնակի մասնագիտական արվեստաբանական փորձաքննություն նշանակելու մասին, փորձաքննության կատարումը հանձնարարելով << ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ին: Որոշմամբ փորձագետներին պարզաբանման համար առաջադրվել են հայցվորի ներկայացուցչի կողմից առաջադրված վերոհիշյալ հարցադրումը և << "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված <<Արմավիր >> 0.7 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվե՞լ է արդյոք Մարտիրոս Սարյանի 1928թ. ստեղծած <<Աշնանային մառախլապատ օր>> գեղանկարը: << ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ը 06.04.2007 թվականին միջնորդություն է ներկայացրել դատարան նշված երկու հարցերը հստակեցնելու վերաբերյալ: /հ.2, գ.թ. 41/ Միջնորդությունը քննարկելու համար վերաքննիչ դատարանը 26.04.2007 թվականին նշանակել է դատական նիստ, որի ընթացքում փորձագետներին հստակեցվել է փորձաքննության ենթակա հարցերը և որոշվել է գրությամբ ՊՈԱԿ-ին ներկայացնել հարցերի վերջնական ձևակերպումը:

Համաձայն 28.04.2007 թվականի գրության փորագետներին առաջադրվել է հետևյալ հարցը. << Ի՞նչ աստիճանի է օգտագործվել Մարտիրոս Սարյանի 1958թ.-ին ստեղծված <<Երեկո Արարատ>>, 1928թ.-ին ստեղծված <<Աշնանային մառախլապատ օր>>, <<Հայաստան>> /տվյալները կներկայացվեն հայցվորի կողմից/ գեղանկարները որոշման մեջ նշված պիտակներում>>: /հ.2, գ.թ. 74/ Վերաքննիչ դատարանում 18.07.2007 թվականին ստացվել է փորձագետի եզրակացությունը, որի հիման վրա գործի կասեցված վարույթը վերսկսվել է /հ.2, գ.թ. 82-91/:

Վերաքննիչ դատարանը թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով 11.03.2008 թվականին բավարարել է Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի վերաքննիչ բողոքը, բեկանել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006

թվականի վճիռը և գործն ուղարկել է նոր քննության: /հ.3, գ.թ. 76-77/ Կատարինե, Սոֆյա և Ռուզան Սարյանների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը 17.03.2008 թվականին հայցադիմում է ներկայացրել Հարավային քաղաքացիական դատարան ընդդեմ <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջների մասին: /հ.4, գ.թ. 33-39/ Հայցադիմումը 18.03.2008 թվականին ընդունվել է վարույթ /քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ3/0419/02/08/, իսկ 11.04.2008 թվականին նշված քաղաքացիական գործը և թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործը միացվել են մեկ վարույթում /հ.4, գ.թ. 18, 1/: ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 01.12.2009 թվականին Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ "ՄԱՊ" ՓԲ ընկերության, երրորդ անձ Արմեն Ղուկասյանի՝ կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու, ինչպես նաև ըստ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ "ՄԱՊ" ՓԲ ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու պահանջների մասին, մերժել է: /հ.9, գ.թ.74-86/:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները  
Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննում է բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, իրավասու է անդրադառնալ միայն այն հարցերին, որոնք վերաբերում են գործին մասնակցող անձանց, սույն վեճի առարկային, բխում են հայցի հիմքերից:

Բողոքը հիմնավոր է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են նաև փորձագետների եզրակացություններով: Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Այս բողոքի քննության համար անհրաժեշտ է պարզել՝ 1) ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի 10.07.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը արդյո՞ք ձեռք է բերվել օրենքի խախտմամբ ,

2) արդյո՞ք այդ եզրակացությունը կարող է դրվել Ռուզան, Կատարինե, Սոֆյա և Արաքսի Սարյանների հայցերը մերժելու վերաբերյալ վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմամբ փորձաքննություն կարող է նշանակվել հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտության դեպքում:

Այս գործի առանձնահատկություններից ելնելով /հեղինակային իրավունքի պաշտպանություն, կոնտրաֆակտի հաստատում/ վեճի ճիշտ լուծման համար առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք <<ՄԱՊ>> ՓԲԸ-ն կոնյակների համար

պիտակներ պատվիրելիս օգտագործել է Մարտիրոս Սարյանի կողմից 1928թ. ստեղծված «Աշնանային մառախլապատ օր»>> գեղանկարը և 1958թ. ստեղծված «Երեկ:Արարատ»>> և ««Հայաստան»>> ստեղծագործությունները՝ դրանք կեղծելով կամ նմանակելով / կոնտրաֆակտ/:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված հարցի պարզաբանումը պահանջում է բացառապես հատուկ մասնագիտական գիտելիքներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Նույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշել այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը:

Այս քաղաքացիական գործով Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի միջնորդության հիման վրա նշանակվել է կրկնակի արվեստաբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ՉԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Որոշմամբ փորձագետներին պարզաբանման համար հայցվորի ներկայացուցչի կողմից առաջադրվել են հետևյալ հարցերը՝ «« "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված ««Արմինա 7 տարեկան»>> 0.5 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվե՞լ է արդյոք Մարտիրոս Սարյանի 1958թ. ստեղծած «« Երեկ:Արարատ»>> և ««Հայաստան»>> ստեղծագործությունները»>> և «« "ՄԱՊ" ՓԲԸ-ի կողմից արտադրված ««Արմավիր »>> 0.7 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվե՞լ է արդյոք Մարտիրոս Սարյանի 1928թ. ստեղծած ««Աշնանային մառախլապատ օր»>> գեղանկարը»>>:

ՀՀ ՉԱԱ ««Փորձաքննությունների ազգային բյուրո»>> ՊՈԱԿ-ը 06.04.2007 թվականին միջնորդություն է ներկայացրել դատարան նշված երկու հարցերը հստակեցնելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ հարցադրման մեջ նշված ««օգտագործել»>> հասկացությունը բազմիմաստ է:

Միջնորդությունը քննարկելու համար Վերաքննիչ դատարանը 26.04.2007 թվականին նշանակել է դատական նիստ, որին մասնակցել են կողմերի ներկայացուցիչները և փորձագետները: Դատական նիստի ընթացքում փորձագետներին հստակեցվել է փորձաքննության ենթակա հարցերը և որոշվել է գրությամբ ՊՈԱԿ-ին ներկայացնել հարցերի վերջնական ձևակերպումը: Համաձայն 28.04.2007 թվականի գրության փորձագետներին առաջադրվել է հետևյալ հարցը. «« Ի՞նչ աստիճանի է օգտագործվել Մարտիրոս Սարյանի 1958թ.-ին ստեղծված ««Երեկ Արարատ»>>, 1928թ.-ին ստեղծված ««Աշնանային մառախլապատ օր»>>, ««Հայաստան»>> գեղանկարները որոշման մեջ նշված պիտակներում»>>:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը, փորձագետ նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Նշված նորմերի մեկնաբանությունի հետևում է, որ օրենսդիրը փորձաքննություն նշանակելու վերաբերյալ դատարանի համար սահմանել է պարտադիր պահանջ, այն է՝ փորձաքննություն

նշանակելու մասին դատարանը պետք է կայացնի առանձին ակտի տեսքով որոշում, այդ որոշման մեջ պետք է սահմանվեն հարցերի ցանկը և բովանդակությունը:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, գտնում է, որ նշված պահանջների խախտումով դատարանի կողմից ձեռքբերված փորձագիտական եզրակացությունը՝ որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված ապացույց, չի կարող համարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով օրենքով ձեռքբերված :

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան որոշում է կայացրել փորձաքննություն նշանակելու վերաբերյալ և որոշման մեջ նշել պարզաբանման ենթակա հարցերը, դրանց բովանդակությունը: Միաժամանակ, քաղաքացիական դատավարության օրենսդրությունը չի նախատեսում փորձագետին որոշմամբ առաջադրված հարցերը փոփոխելու, հստակեցնելու, ավելացնելու կամ պակասեցնելու վերաբերյալ նորմեր, դրանց իրականացման դատավարական կարգը և ձևը:

Այս քաղաքացիական գործով փորձագետին առաջադրված հարցերը հստակեցնելու խնդիր է առաջացել: Այդ նպատակով դատարանը հրավիրել է դատական նիստ, որից հետո գրությամբ, փորձագետներին ներկայացրել հարցադրման վերջնական ձևակերպումը : Գրությունը ստորագրել է դատավոր Ա.Թումանյանը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս հանգամանքը դատավարական խախտում համարելու խնդիրը պարզելու համար անհրաժեշտ է հարցը դիտարկել դատավարության կողմերի իրավունքները խախտելու կամ սահմանափակելու, վեճը ճիշտ լուծելու տեսանկյունից: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս տեսանկյունից առաջնահերթ է, ոչ թե այն հանգամանքը, թե առաջադրված հարցերի հստակեցումը ինչ եղանակով է տրամադրվել փորձագետներին /գրությամբ, որոշմամբ և այլն/, ով է ստորագրել գրությունը /մեկ դատավորը, թե դատարանի ամբողջ կազմը/, այլ կարող է այն հանգամանքը, որ դատարանի կողմից ընտրված տարբերակը խախտել կամ սահմանափակել է արդյո՞ք դատավարության կողմերի իրավունքները կամ օրինական շահերը: Քաղաքացիական գործի նյութերի, մասնավորապես դատական նիստերի արձանագրության /26.04.2007 թվականի դատական նիստի/ ուսումնասիրությամբ պարզվել է, որ առաջադրված հարցերը հստակեցնելու միջնորդությունը քննարկելու համար Վերաքննիչ դատարանը հրավիրել է դատական նիստ, որին մասնակցել են հայցվոր Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը և <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վարդան Խեչյանը: Այսինքն, դատավարության մասակիցները հնարավորություն են ունեցել հայտնել իրենց դիրքորոշումը ինչպես հարցերը հստակեցնելու, այն վերջնական տեսքով ներկայացնելու, այնպես էլ փորձագետների մասնագիտական գիտելիքները պարզելու համար, իրականացնել օրենքով նախատեսված իրենց դատավարական իրավունքները:

Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ փորձագետին առաջադրված հարցերը դատավոր Ա.Թումանյանի գրությամբ հստակեցնելը, թեև իր մեջ պարունակում դատավարական նորմերի ձևական խախտում, սակայն դրանով կողմերի իրավունքները չեն սահմանափակվել, այդ իրավունքները չեն խախտվել, հետևաբար այս առումով տեղի չի ունեցել այնպիսի դատավարական իրավունքի խախտում, որը ազդել է գործի ելքի վրա:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը, Վերաքննիչ դատարանը արձանագրում է հետևյալը.

Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը 25.05.2006թ-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Տնտեսական դատարան ընդդեմ "ՄԱՊ" ՓԲԸ-ի կոնտրաֆակտի օգտագործումն

արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին:

ՀՀ Տնտեսական դատարանի 29.05.2006թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: ՀՀ Արմավիրի մարզի առաջին աստիճանի դատարանը 01.12.2006 թվականին հայցն ամբողջությամբ մերժել է, իսկ Վերաքննիչ դատարանը 11.03.2008 թվականին այդ վճիռն ամբողջությամբ բեկանել է՝ նկատի ունենալով որ Վերաքննիչ դատարանում ձեռք են բերվել նոր ապացույցներ /այդ թվում նաև փորձագետի վիճարկվող եզրակացությունը /, որոնք գործի ճիշտ լուծման համար կարող են ունենալ էական նշանակություն, ամբողջությամբ բեկանել է վճիռը և գործն ուղարկել նոր քննության: Գործի նոր քննության ընթացքում 11.04.2008 թվականին որոշմամբ այս գործի հետ մեկ վարույթում է միացվել նաև քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ընդդեմ "ՄԱՊ" ՓԲԸ-ի՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու մասին, այս գործի հետ համատեղ քննության նպատակով: Այնուհետև, զույքային պահանջներով հայցապահանջները առանձնացվել են առանձին վարույթում և այս գործի շրջանակներում ներառված չեն: Դատարանը 01.12.2009 թվականի վճռով մերժել է ինչպես Արաքսյա Սարյանի հայցը, այնպես էլ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը:

Դատարանը հայցերը մերժելիս բացառապես հիմք է ընդունել կրկնակի փորձաքննության արդյունքում տրված փորձագետի եզրակացությունը, որի համաձայն <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի արտադրած պիտակները և Մարտիրոս Սարյանի վերոհիշյալ ստեղծագործությունները ակնհայտորեն տարբերվում են միմյանցից, թեև դրանց միջև առկա են որոշ էլեմենտների հեռավոր նմանություններ և ապացուցված չի համարել կոնտրաֆակտի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Մրցակցության սկզբունքի տարրեր են սահմանված նույն օրենսգրքի 48-րդ հոդվածում, համաձայն որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Որպես ապացուցման պարտականության կատարման և դատարանի կողմից դրանց գնահատման չափանիշ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված է ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը, ըստ որի՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Ապացույցների գնահատման գործընթացի համար սահմանվել է օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներ: Օբյեկտիվ չափանիշների

վերաբերում են ապացույցների հետազոտումը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ձևով, իսկ սուբյեկտիվ չափանիշին՝ դատարանի անունից հանդես եկող պաշտոնատար անձի՝ դատավորի ներքին համոզումը: Վճռի մեջ պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է (Տե՛ս թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը՝ ըստ հայցի Սեդա Սունյանի ընդդեմ Իդա Էբզիմյանի՝ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ օգտագործման իրավունքն առանց փոխհատուցման դադարեցնելու և վտարելու պահանջի մասին, ըստ հայցի և հակընդդեմ հայցի Իդա Էբզիմյանի ընդդեմ Սեդա Սունյանի՝ գումարի բռնագանձման, սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու և փաստացի տիրապետմամբ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող ժառանգական գույքի բաժինն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին) :

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս քաղաքացիական գործով առկա են երկու նմանատիպ հայցեր՝ որոնցից մեկը դեռևս 2006 թվականին ներկայացրել է Արաքսյա Սարյանը, իսկ երկրորդը, 17.03.2008 թվականին՝ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները: Նշված երկու հայցերը միացվել են մեկ վարույթում 11.04.2008 թվականին: Քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել, որ կրկնակի փորձաքննությունը նշանակվել է 28.02.2007 թվականին, իսկ եզրակացությունը դատարանին է ներկայացվել 18.07.2007 թվականին:

Նշված փաստերի համադրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ ստեղծվել է մի իրավիճակ, երբ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել մասնակցել գործով կրկնակի փորձագիտական եզրակացության ձեռքբերմանը, քանի որ նրանք հայց են ներկայացրել ավելի ուշ, երբ փորձագիտական եզրակացության հիմքով Արաքսյա Սարյանի հայցով կայացրած վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության:

Այս քաղաքացիական գործով հայցի առարկայի և հիմքերի առանձնահատկություններից հետևում է, որ փորձագիտական եզրակացությունը վճռորոշ դեր է կատարում վեճի լուծման համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ փորձագիտական եզրակացության՝ միակ ժանրակչի ապացույցը լինելու պարագայում, դատարանը առավելագույնս պետք է ապահովի փորձագիտական եզրակացություն ձեռքբերելու համար կողմերի դատավարական իրավունքների իրականացման հնարավորությունը: Մինչդեռ, այս գործով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները Վերաքննիչ դատարանի կողմից փորձագիտական եզրակացությունը ձեռք բերելիս գործի քննությանը չեն մասնակցել, այդ ապացույցը ձեռք բերելիս որևէ դիրքորոշում չեն հայտնել, փորձագետներին չեն առաջադրել հարցեր, չեն մասնակցել փորձաքննությանը / թեև այս կապակցությամբ վերջիններիս ներկայացուցիչը գործի նոր քննության ընթացքում բազմիցս միջնորդել է նշանակել նոր փորձաքննություն, որը դատարանը մերժել է, այդ հիմքով ներկայացվել են ինքնաբացարկի միջնորդություններ և այլն/:

Դատարանը Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը մերժելիս բացառապես հիմք է ընդունել Վերաքննիչ դատարանում կրկնակի փորձաքննությամբ ձեռքբերված եզրակացությունը: Հայցը մերժելու վերաբերյալ այլ պատճառաբանություններ դատարանի վճռում առկա չեն:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս դեպքում դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առներ, թե ինչ կարգով և

եղանակով, ում մասնակցությամբ է ձեռք բերվել փորձագետի եզրակացությունը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ապացույցների ձեռք բերման միջոցներն ու ձևերը դատաքննության արդարացիությունը պայմանավորող գործոններից են և դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատելիս պետք է հանդիս, որ դատական քննությունը՝ որպես ամբողջություն, եղել է արդարացի, ներառյալ նաև այն, թե ինչպես են ձեռք բերվել ապացույցները, դատավարության կողմերի համար ստեղծվել են արդյոք հավասար պայմաններ, կողմերը հնարավորություն ունեցել են օգտվել իրենց իրավունքներից:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ եզրակացության հիմքով մերժելով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը, դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները և այս կապակցությամբ հիմնավոր է բողոքի փաստարկները:

Բացի այդ, համաձայն ՀՀ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» > Եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ունի արդարացի լուսմների իրավունք:

Այս հոդվածի իմաստով լուսմների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանն իր նախադեպային առանձին վճիռներում բացահայտել է «կողմերի հավասարություն» և «մրցակցային դատավարություն» հասկացությունների բովանդակությունը: «Կողմերի հավասարությունը», ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ: Եվրոպական դատարանը կողմերի հավասարության պահանջի խախտում է արձանագրել, մասնավորապես, Դոմբո Բեհիրն ընդդեմ Նիդեռլանդների, Դե Հաեսը և Պիյսելսն ընդդեմ Բելգիայի գործերով վճիռներում:

Արդարացի լուսմների պահանջը ներառում է նաև դատարանի պատճառաբանված որոշում ընդունելու պարտավորությունը: Եվրոպական դատարանը Վան դե Հուրկն ընդդեմ Նիդեռլանդների գործով կայացրած վճիռում նշել է. «6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ դատարանը պատճառաբանի իր որոշումը, սակայն այս դրույթը չպետք է ընկալել այնպես, որ այն ներկայացնում է նաև յուրաքանչյուր փաստարկին մանրամասն պատասխան տալու դատարանի պարտավորությունը»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքին, արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև "արդարացի հավասարակշռության" իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (տես՝ Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը և Ստեկ-Ռիշը և Այլոք ընդդեմ Լիխտենշտեյնի 19.05.2005թ որոշումը կետ 54, ինչպես նաև տես՝ Գյուրրու քաղաքապետարանի հայցն ընդդեմ "Չապ" ՍՊԸ-ի՝ սեփականատիրոջ իրավունքների խախտումները վերացնելու պահանջի մասին և "Չապ" ՍՊԸ-ի հայցն ընդդեմ

	<p>Քաղաքապետարանի՝ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի թիվ 0351/02/08-(ՇԴ) որոշումը) :</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները զրկված են եղել գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները ներկայացնելու հնարավորությունից, իսկ գործում առկա կրկնակի փորձագիտական եզրակացության վերաբերյալ չեն իրականացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված իրենց իրավունքները:</p> <p>Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքում նշված հիմքերի առկայությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն վճիռն ամբողջությամբ բեկանելու հիմք է:</p> <p>Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը անհրաժեշտ է համարում բեկանված մասով իրականացնել գործի նոր քննություն:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220- 221 2-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը</p> <p><b>Ո Ր Ո Շ Ե Ց</b></p> <p>1. Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբողջությամբ բեկանել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով 01.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:</p> <p>2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով:</p> <p>3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:</p> <p>Նախագահող դատավոր Ա.Պետրոսյան Դատավոր Ն.Տավարացյան Դատավոր Ս.Միքայելյան</p>
<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	04-05-2010
<b>Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:</b>	0
<b>Ամսաթիվ:</b>	03-06-2010
<b>Ամսաթիվ:</b>	03-06-2010
<b>Էջերի քանակ:</b>	10h,1'238թ,2'206թ,3'80թ,4'199թ,5'179թ,6'79թ,7'153թ,8'47թ,9'95թ,10'111թ
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	04-06-2010
<b>Ուր:</b>	Վճռաբեկ
<b>Գրության համարը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	09-06-2010

**Դատական Գործ N: ՀՔԴ3/0398/02/08**

<b>Ամսաթիվ:</b>	08-12-2008	
<b>Բողոք բերող անձը</b>		
Անուն	Արաքսի	
Ազգանուն	Սարյան	
Հասցե	Երեվան	
Սեռ	Իգական	
<b>Բողոք բերող անձը</b>		
Անուն	Ռուզան	
Ազգանուն	Սարյան	
Հասցե	Երեվան	
Սեռ	Իգական	
<b>Բողոք բերող անձը</b>		
Անուն	Կատարինե	
Ազգանուն	Սարյան	
Հասցե	Երեվան	
Սեռ	Իգական	
<b>Բողոք բերող անձը</b>		
Անուն	Սոֆյա	
Ազգանուն	Սարյան	
Հասցե	Երեվան	
Սեռ	Իգական	
<b>Ներկայացուցիչ</b>		
Անուն	Արթուր	
Ազգանուն	Պետրոսյան	
Հասցե	Երեվան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն 4 հարկ	
Սեռ	Արական	
<b>Հավատարմագրված փաստաբան</b>		
Անուն		
Ազգանուն		
Հասցե		
<b>Պետական տուրք:</b>	20000	
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>		
<b>Պատասխան բերող անձը</b>		
Անուն		
Ազգանուն		
Հասցե		
<b>Բողոքարկվող դատական ակտը:</b>	Ա.Սարյան, Ռ.Սարյան, Կ.Սարյան, Ս.Սարյան ընդդեմ ՄԱՊ ՓԲԸ՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու եվ ստացված եկամուտները բռնագանձելու պ/մ:	

<b>Գործի համարը:</b>	ՀՔԴ3/0398/02/08
<b>Ուն կողմից է բերվել բողոքը:</b>	Հայցվոր
<b>Գործի ստացման ամսաթիվը:</b>	09-01-2009
<b>Էջերի քանակը:</b>	238
<b>Գործին կից փաստաթղթերը:</b>	2-րդ հատոր-206թ, 3-րդ հատոր 80թ. 4-րդ հատոր 199թ. 5-րդ հատոր 179թ. 6-րդ հատոր 27թ.
<b>Վճռաբեկ վարույթի համարը:</b>	ՀՔԴ3/0398/02/08
<b>Ամսաթիվ:</b>	09-01-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Երվանդ Հենրիկի Խունդկարյան
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	06-02-2009
<b>Որոշման բովանդակությունը:</b>	Բողոքը վերադարձվել է:
<b>Ամսաթիվ:</b>	16-02-2009
<b>Գործի առաքման ամսաթիվը:</b>	16-03-2009
<b>Դատարան:</b>	Տվյալների կենտրոն
<b>Այլ նշումներ:</b>	Գործն ուղարկվել է ՀՀ դատական դեպարտամենտ 6 հատոր
<b>Ամսաթիվ:</b>	08-06-2009
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն	ԱրաքսիՌուզանԿատարինեՍոֆյա
Ազգանուն	Սարյաններ
Հասցե	Երեվան
Սեռ	Իգական
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	Երեվան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն, 5-րդ հարկ
Սեռ	Արական
<b>Հավատարմագրված փաստաբան</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	

Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	Արաքսի Ռուզան Կատարինե Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ ՄԱՊ ՓԲԸ-ի հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու եվ ստացված եկամուտները բռնագանձելու պ/մ:
Գործի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Գործի ստացման ամսաթիվը:	30-06-2009
Էջերի քանակը:	238
Գործին կից փաստաթղթերը:	2-206, 3-80, 4-199, 5-179, 6-79, 7-153, 8-26
Վճռաբեկ վարույթի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Ամսաթիվ:	30-06-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Մամիկոն Լիբկնեխտի Դրմեյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-07-2009
Որոշման բովանդակությունը:	Վերադարձնել Արաքսի, Ռուզան, Կատարինե, Սոֆյա Սարյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:
Ամսաթիվ:	24-08-2009
Գործի առաքման ամսաթիվը:	31-08-2009
Դատարան:	Արմավիրի մարզ
Այլ նշումներ:	8 հատոր
Ամսաթիվ:	31-05-2010
Ամսաթիվ:	07-06-2010
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն:	ՄԱՊ ՓԲԸ
Հասցե:	Արմավիրի մ., գ. Լենուղի
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Մ

Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	Երևան, Կիլյան 8
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն	Արաքսի Ռուզան Կատարինե Սոֆյա
Ազգանուն	Սարյաններ
Հասցե	Երևան, Սարյան փ. տուն 3
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	Երևան, Խանջյան 50, Թեքեյան Կենտրոն 5 հարկ
Պետական տուրք:	20000
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	10-05-2010
Պատասխանի ստացման ամսաթիվը:	25-06-2010
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	Արաքսի Ռուզան Կատարինե Սոֆյա
Ազգանուն	Սարյաններ
Հասցե	Երևան, Սարյան փ. տուն 3
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Պետրոսյան
Հասցե	Երևան, Խանջյան 50, Թեքեյան Կենտրոն 5 հարկ
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն:	ՍԱՊ ՓԲԸ
Հասցե:	Արմավիրի մ., գ. Լենուղի
Հեռախոս:	268299
Բողոքարկվող դատական ակտը:	Արաքսի Ռուզան Կատարինե Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ ՍԱՊ ՓԲԸ-ի հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու եվ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին
Գործի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանողի ներկայացուցիչ
Գործի ստացման ամսաթիվը:	14-06-2010
Էջերի քանակը:	238
Գործին կից փաստաթղթերը:	2-206թ, 3-80թ,4-199թ,5-179թ,6-79թ,7-153թ,8-47թ,9-95թ,10-111թ
Վճռաբեկ վարույթի համարը:	ՀՔԴ3/0398/02/08
Ամսաթիվ:	14-06-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Երվանդ Հենրիկի Խունդկարյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	

Այլ նշումներ:

<b>Ամսաթիվ:</b>	30-06-2010
<b>Որոշման բովանդակությունը:</b>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ3/0398/02/08 դատարանի որոշում 2010թ. Քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ3/0398/02/08 Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան Դատավորներ՝ Ն. Տավարացյան Ս. Միքայելյան</p> <p>ՈՐՈՇՈՒՄ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>&lt;&lt;30&gt;&gt; հունիսի 2010թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),</p> <p>նախագահությամբ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ</p> <p>քննարկելով ըստ հայցի Արաքսի Սարյանի ընդդեմ &lt;&lt;ՄԱՊ&gt;&gt; ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ Արմեն Դուկասյանի՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջների մասին, և ըստ հայցի Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ընդդեմ Ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2010 թվականի որոշման դեմ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,</p> <p>ՊԱՐՁԵՑ</p> <p>Դիմելով դատարան՝ Արաքսի Սարյանը հայտնել է, որ 12.08.2003 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգն է, որի ստեղծագործությունների թվին է պատկանում 1928 թվականին ստեղծված &lt;&lt;Աշնանային մառախլապատ օր&gt;&gt; և 1958 թվականին ստեղծված &lt;&lt;Երեկո: Արարատ&gt;&gt; ստեղծագործությունները: Ընկերությունն արտադրում է 0,25 լիտր, 0,5 լիտր և 0,7 լիտր տարողունակությամբ 3 տարեկան &lt;&lt;Արմավիր&gt;&gt;, ինչպես նաև 0,25 լիտր և 0,5 լիտր տարողունակությամբ 3 տարեկան և 5 տարեկան &lt;&lt;Արմինա&gt;&gt; անվամբ կոնյակները, որոնց պիտակի վրա պատկերված է &lt;&lt;Աշնանային մառախլապատ օր&gt;&gt; ստեղծագործության աղավաղված (վերամշակված) օրինակը: Ընկերությունն արտադրում է նաև 0,25 լիտր և 0,5 լիտր տարողությամբ 7 տարեկան &lt;&lt;Արմինա&gt;&gt; անվամբ կոնյակը, որի պիտակի վրա պատկերված է &lt;&lt;Երեկո: Արարատ&gt;&gt;</p>

ստեղծագործության աղավաղված (վերամշակված) օրինակը: Պատճառաբանելով, որ Ընկերության գործողություններով խախտվում են իր գույքային իրավունքները, ինչպես նաև հեղինակի անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքները, պահանջել է Ընկերությանն արգելել Մարտիրոս Սարյանի <<Աշնանային մառախլապատ օր>> և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների պատկերով արտադրանքի արտադրումը և իրացումը, պարտավորեցնել սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից նշված ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, բռնագանձել և ոչնչացնել նշված ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, զովագոյային նյութերը և արտադրության միջոցները, ինչպես նաև բռնագանձել Ընկերության կողմից ցանկացած տարողունակությամբ 3 տարեկան <<Արմավիր>>, 3 տարեկան <<Արմինա>>, 5 տարեկան <<Արմինա>> և 7 տարեկան <<Արմինա>> անվամբ կոնյակների իրացումից ստացված եկամուտը՝ 8.900 ՀՀ դրամի չափով, որն Ընկերությունը ստացել է իր կողմից կոնյակների մեկական շիշ ձեռք բերելու հետևանքով:

<< Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006 թվականի վճռով Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ Ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, մերժվել է:

<< վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008 թվականի որոշմամբ << Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է << հարավային քաղաքացիական դատարան՝ նոր քննության: Դիմելով դատարան՝ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները պահանջել են Ընկերությանն արգելել Մարտիրոս Սարյանի <<Աշնանային մառախլապատ օր>>, <<Երեկո: Արարատ>> և <<Արմինա>> ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրանքի արտադրումը և իրացումը, պարտավորեցնել սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից նշված ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, բռնագրավել և ոչնչացնել նշված ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, զովագոյային նյութերը և արտադրության միջոցները:

<< հարավային քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշմամբ թիվ ՀՔԴ3/0398/02/08 և թիվ ՀՔԴ3/0419/02/08 քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

<< հարավային քաղաքացիական դատարանի 28.10.2008 թվականի որոշմամբ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործից առանձին վարույթում է առանձնացվել Ընկերության կողմից Մարտիրոս Սարյանի <<Աշնանային մառախլապատ օր>> և <<Երեկո: Արարատ>> ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողությամբ 3 տարեկան <<Արմավիր>>, 3 տարեկան <<Արմինա>>, 5 տարեկան <<Արմինա>> և 7 տարեկան <<Արմինա>> անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը (հասույթը) բռնագանձելու պահանջը:

<< Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.12.2009 թվականի վճռով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ Ընկերության և Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ Ընկերության մերժվել են:

<< վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2010 թվականի որոշմամբ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների վերաքննիչ բողոքը քավարարվել է՝ Դատարանի 01.12.2009 թվականի վճիռը բեկանվել

է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը և պահանջել է Վերաքննիչ դատարանի 04.05.2010 թվականի որոշման մեջ կատարել փոփոխություն և հաստատել, որ <<փորձագետի եզրակացությունը նախապես հաստատված ապացույցի ուժ չունի և դատարանը պարտավոր է այն գնահատել, խախտվել են հայցվորների՝ փորձաքննությանը ներկա գտնվելու և փորձագետներին բացարկ հայտնելու իրավունքները, այսինքն՝ <<ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի 10.07.2007 թվականի եզրակացությունը հանդիսանում է օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույց, դատարանը պարտավոր է գործում առկա գրավոր ապացույցների, փորձագետների պարզաբանումների, հայցվորի բացատրությունների, փաստարկների ամբողջական հետազոտություն և գնահատում իրականացնել>>:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, գտնում է, որ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.

<< քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

<< քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, և դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի որևէ ենթակետի հիմնավորումները:

<< քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Տվյալ դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը, խախտելով վերը նշված դրույթների պահանջները, վճռաբեկ բողոքում չի հիմնավորել դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտման կամ սխալ կիրառման առկայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքը չի համապատասխանում << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի, 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Հետևաբար, << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, այն ենթակա է վերադարձման:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ խախտվել են << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով, 219-րդ հոդվածի 1-ին կետով և << Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անձի դատական պաշտպանություն ստանալու իրավունքը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը 04.05.2010 թվականի որոշմամբ Ղատարանի վճիռը բեկանել է ամբողջությամբ՝ գործն ամբողջ

ծավալով ուղարկելով նոր քննության, որպիսի պայմաններում ապահովել է անձի դատական պաշտպանություն ստանալու իրավունքը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ և 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

#### ՈՐՈՇԵՑ

1. Վերադարձնել թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2010 թվականի որոշման դեմ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
Դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ  
Վ. ԱԲԵԼՅԱՆ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Մ. ԴՐՄԵՅԱՆ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ  
ՀՔԴ3/0398/02/08  
դատարանի որոշում 2010թ.  
Քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ3/0398/02/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ  
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<30>> հունիսի 2010թ. ք.Երևան  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի  
քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի Արաքսի Սարյանի ընդդեմ <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ Արմեն Դուկասյանի՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի

օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջների մասին, և ըստ հայցի Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ընդդեմ Ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2010 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

#### ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը  
Դիմելով դատարան՝ Արաքսի Սարյանը հայտնել է, որ 12.08.2003 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգն է, որի ստեղծագործությունների թվին է պատկանում 1928 թվականին ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» և 1958 թվականին ստեղծված «Երեկո: Արարատ» ստեղծագործությունները: Ընկերությունն արտադրում է 0,25 լիտր, 0,5 լիտր և 0,7 լիտր տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», ինչպես նաև 0,25 լիտր և 0,5 լիտր տարողունակությամբ 3 տարեկան և 5 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակները, որոնց պիտակի վրա պատկերված է «Աշնանային մառախլապատ օր» ստեղծագործության աղավաղված (վերամշակված) օրինակը: Ընկերությունն արտադրում է նաև 0,25 լիտր և 0,5 լիտր տարողությամբ 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակը, որի պիտակի վրա պատկերված է «Երեկո: Արարատ» ստեղծագործության աղավաղված (վերամշակված) օրինակը: Պատճառաբանելով, որ Ընկերության գործողություններով խախտվում են իր գույքային իրավունքները, ինչպես նաև հեղինակի անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքները, պահանջել է Ընկերությանն արգելել Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների պատկերով արտադրանքի արտադրումը և իրացումը, պարտավորեցնել սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից նշված ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, բռնագանձել և ոչնչացնել նշված ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, գովազդային նյութերը և արտադրության միջոցները, ինչպես նաև բռնագանձել Ընկերության կողմից ցանկացած տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», 3 տարեկան «Արմինա», 5 տարեկան «Արմինա» և 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների իրացումից ստացված եկամուտը՝ 8.900 ՀՀ դրամի չափով, որն Ընկերությունը ստացել է իր կողմից կոնյակների մեկական շիշ ձեռք բերելու հետևանքով:  
ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006 թվականի վճռով Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ Ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, մերժվել է:  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008 թվականի որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ հարավային քաղաքացիական դատարան՝ նոր քննության: Դիմելով դատարան՝ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները պահանջել են Ընկերությանն արգելել Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմինա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրանքի արտադրումը և իրացումը, պարտավորեցնել սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից նշված ստեղծագործությունների

պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, բռնագրավել և ոչնչացնել նշված ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, զովագոյային նյութերը և արտադրության միջոցները:  
<< հարավային քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշմամբ թիվ ՀՔԴ3/0398/02/08 և թիվ ՀՔԴ3/0419/02/08 քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:  
<< հարավային քաղաքացիական դատարանի 28.10.2008 թվականի որոշմամբ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործից առանձին վարույթում է առանձնացվել Ընկերության կողմից Մարտիրոս Սարյանի <<Աշնանային մառախլապատ օր>> և <<Երեկո: Արարատ>> ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողությամբ 3 տարեկան <<Արմավիր>>, 3 տարեկան <<Արմինա>>, 5 տարեկան <<Արմինա>> և 7 տարեկան <<Արմինա>> անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը (հասույթը) բռնագանձելու պահանջը:  
<< Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.12.2009 թվականի վճռով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ Ընկերության և Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ Ընկերության մերժվել են:  
<< վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2010 թվականի որոշմամբ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 01.12.2009 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական իրավունքի խախտման հիմքով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորումներով.  
Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, ինչպես նաև բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Բողոք բերած անձը նշված հիմնավորումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ տեղի չի ունեցել այնպիսի դատավարական իրավունքի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, սակայն բեկանել է Դատարանի վճիռը և պարզ չէ, թե ինչու է Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների մասով վերաքննիչ բողոքը բավարարելով, բավարարել նաև Արաքսի Սարյանի բողոքը և գործն ուղարկել ամբողջ ծավալով նոր քննության:

Վերաքննիչ դատարանը որոշումը չի պատճառաբանել, սխալ հետևություններ և եզրահանգումներ է արել, իսկ Արաքսի Սարյանի հայցի մասով Վերաքննիչ դատարանն ընդհանրապես դիրքորոշում չի հայտնել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ուշադրության չի արժանացրել և չի գնահատել, որ Դատարանում գործի քննության ժամանակ հարցաքննվել են փորձագետներ Ս.Սարուխանյանը և Է.Ավանեսովը, որոնք այնուհետև կոնտրաֆակտի և հեղինակային իրավունքի խախտման փաստի բացակայության մասին եզրակացությամբ տրված իրենց դիրքորոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների

ներկայացուցիչները պարզաբանման համար փորձագետներին հարցեր են առաջադրել և լիիրավ օգտվել են իրենց իրավունքներից:

Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.05.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.12.2009 թվականի վճռին:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումները՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով:

Այսպես, Վերաքննիչ դատարանը, «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով դատական ակտը, հիմնվելով Դատարան ներկայացված ապացույցների վրա, որոշում կայացնելիս պատճառաբանել է, որ ««Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը 01.12.2006 թվականին Արաքսի Սարյանի հայցն ամբողջությամբ մերժել է, իսկ Վերաքննիչ դատարանը 11.03.2008 թվականին այդ վճիռն ամբողջությամբ բեկանել է՝ նկատի ունենալով որ Վերաքննիչ դատարանում ձեռք են բերվել նոր ապացույցներ (այդ թվում նաև փորձագետի վիճարկվող եզրակացությունը), որոնք գործի ճիշտ լուծման համար կարող են ունենալ էական նշանակություն, և գործն ուղարկել է նոր քննության: Գործի նոր քննության ընթացքում 11.04.2008 թվականի որոշմամբ այս գործի հետ մեկ վարույթում է միացվել նաև քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ընդդեմ «ՄԱԴ» ՓԲԸ-ի՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջների մասին, այս գործի հետ համատեղ քննության նպատակով: Այնուհետև, գույքային պահանջներով հայցապահանջներն առանձնացվել են առանձին վարույթում և այս գործի շրջանակներում ներառված չեն: Դատարանը 01.12.2009 թվականի վճռով մերժել է ինչպես Արաքսի Սարյանի հայցը, այնպես էլ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը: Դատարանը հայցերը մերժելիս բացառապես հիմք է ընդունել կրկնակի փորձաքննության արդյունքում տրված փորձագետի եզրակացությունը, որի համաձայն՝ «ՄԱԴ» ՓԲԸ-ի արտադրած պիտակները և Մարտիրոս Սարյանի վերոհիշյալ ստեղծագործություններն ակնհայտորեն տարբերվում են միմյանցից, թեև դրանց միջև առկա են որոշ էլեմենտների հեռավոր նմանություններ և ապացուցված չի համարել կոնտրաֆակտի

առկայությունը>> և գտել է, որ <<այս քաղաքացիական գործով առկա են երկու նմանատիպ հայցեր՝ որոնցից մեկը դեռևս 2006 թվականին ներկայացրել է Արաքսի Սարյանը, իսկ երկրորդը, 17.03.2008 թվականին՝ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները: Նշված երկու հայցերը միացվել են մեկ վարույթում 11.04.2008 թվականին: Քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կրկնակի փորձաքննությունը նշանակվել է 28.02.2007 թվականին, իսկ եզրակացությունը դատարանին է ներկայացվել 18.07.2007 թվականին: Նշված փաստերի համադրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ ստեղծվել է մի իրավիճակ, երբ Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյաններն օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել մասնակցել գործով կրկնակի փորձագիտական եզրակացության ձեռքբերմանը, քանի որ նրանք հայց են ներկայացրել ավելի ուշ, երբ փորձագիտական եզրակացության հիմքով Արաքսի Սարյանի հայցով կայացրած վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության>>:

Այնուհետև Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ <<այս քաղաքացիական գործով հայցի առարկայի և հիմքերի առանձնահատկություններից հետևում է, որ փորձագիտական եզրակացությունը վճռորոշ դեր է կատարում վեճի լուծման համար: Փորձագիտական եզրակացության՝ միակ ծանրակշիռ ապացույցը լինելու պարագայում, դատարանն առավելագույնս պետք է ապահովի փորձագիտական եզրակացություն ձեռքբերելու համար կողմերի դատավարական իրավունքների իրականացման հնարավորությունը: Մինչդեռ, այս գործով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները Վերաքննիչ դատարանի կողմից փորձագիտական եզրակացությունը ձեռք բերելիս գործի քննությանը չեն մասնակցել, այդ ապացույցը ձեռք բերելիս որևէ դիրքորոշում չեն հայտնել, փորձագետներին չեն առաջադրել հարցեր, չեն մասնակցել փորձաքննությանը (թեև այս կապակցությամբ վերջիններիս ներկայացուցիչը գործի նոր քննության ընթացքում բազմիցս միջնորդել է նշանակել նոր փորձաքննություն, որը դատարանը մերժել է, այդ հիմքով ներկայացվել են ինքնաբացարկի միջնորդություններ և այլն): Դատարանը Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը մերժելիս բացառապես հիմք է ընդունել Վերաքննիչ դատարանում կրկնակի փորձաքննությամբ ձեռքբերված եզրակացությունը: Հայցը մերժելու վերաբերյալ այլ պատճառաբանություններ դատարանի վճռում առկա չեն>>, և գտել է, որ <<այս դեպքում դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առներ, թե ինչ կարգով և եղանակով, ում մասնակցությամբ է ձեռք բերվել փորձագետի եզրակացությունը: Ապացույցների ձեռք բերման միջոցներն ու ձևերը դատաքննության արդարացիությունը պայմանավորող գործոններից են և դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատելիս պետք է հանդավի, որ դատական քննությունը՝ որպես ամբողջություն, եղել է արդարացի, ներառյալ նաև այն, թե ինչպես են ձեռք բերվել ապացույցները, դատավարության կողմերի համար ստեղծվել են արդյոք հավասար պայմաններ, կողմերը հնարավորություն ունեցել են օգտվել իրենց իրավունքներից: Այսպիսով, վերոհիշյալ եզրակացության հիմքով մերժելով Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցը, դատարանը խախտել է << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները և այս կապակցությամբ հիմնավոր է բողոքի փաստարկները: Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանները գրկված են եղել գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները ներկայացնելու հնարավորությունից, իսկ գործում առկա կրկնակի փորձագիտական եզրակացության վերաբերյալ չեն իրականացրել << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված իրենց իրավունքները>>:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը <<Մելտեքս>> ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04) գործով

17.06.2008 թվականի վճռով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ, արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում միայն այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ»:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձը չի հիմնավորել նաև օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի սույն գործով որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումները՝ դատական սխալի առկայության, ինչպես նաև բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու մասին, անհիմն են, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, այն ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ և 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վերադարձնել թիվ ՀՔԴ3/0398/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2010 թվականի որոշման դեմ «ՄԱՊ» ՓԲԸ-ի բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
 Դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ  
 Վ. ԱԲԵԼՅԱՆ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆ  
 Է. ՀԱՅՐԻՅԱՆ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

<b>Ամսաթիվ:</b>	29-07-2010
<b>Գործի առաքման ամսաթիվը:</b>	05-08-2010
<b>Դատարան:</b>	Արմավիրի մարզ
<b>Այլ նշումներ:</b>	11 հատոր

**Դատական Գործ N: ՀՔԴ3/0398/02/08**

<b>Ամսաթիվ:</b>	19-03-2009
<b>Ամսաթիվ:</b>	19-03-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	Վահե Ռաֆայելի Խալաթյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	19-03-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	14-04-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	28-04-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	11-05-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	12-05-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	14-05-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	22-05-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	27-03-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>ժամ:</b>	
<b>Երբ:</b>	14-05-2009
<b>Հիմքը:</b>	Կանխակալ վերաբերմունք
<b>Ինքնաբացարկի նախաձեռնողը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	14.05.2009թ. հայցվորի ներկայացուցիչ Հ. Հարությունյանն ինքնաբացարկի միջնորդություն է հայտնել դատավոր Վ.Խալաթյանին: 22.05.2009թ. Սարյանների ներկայացուցիչ Հ. Հարությունյանը բացարկ է հայտնել նախագահող դատավոր Վ. Խալաթյանին: Նույն օրվա որոշմամբ այն մերժվել է:
<b>Ամսաթիվ:</b>	14-05-2009
<b>Ամսաթիվ:</b>	22-05-2009
<b>Հիմքը</b>	
<b>Հոդված</b>	ՀՀ քաղ.դատ օր-ի 10, 105, 106
<b>Որոշման բովանդակությունը:</b>	Քաղ. գործ ՀՔԴ 3/0398/02/08

ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.05.2009թ. ք. Էջմիածին

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ. Խալաթյանս, տեղեկանալով, որ թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործով հայցվորների ներկայացուցիչ Հայկ Հարությունյանի կողմից 20.05.2009թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացվել է ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոք, և քննարկելով քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործի դատական քննությամբ 12.05.2009թ. հայցվորի ներկայացուցիչ Հ. Հարությունյանը միջնորդություն է ներկայացրել նախագահող դատավոր Վ. Խալաթյանին՝ ինքնաբացարկ հայտնելու մասին: 14.05.2009թ. ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը մերժվել է:  
21.05.2009թ. հայցվորի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը նախագահող դատավոր Վ. Խալաթյանին հայտնել է բացարկ: 22.05.2009թ. դատարանի համապատասխան որոշմամբ՝ բացարկի միջնորդությունը մերժվել է:  
20.11.2008թ. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան մուտքագրվել է «Ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ» հայցվորների ներկայացուցիչ Հ. Հարությունյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը: Հիմք ընդունելով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10, 105 և 106 հոդվածները, դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակում անհնարին է շարունակել տվյալ գործի քննությունը, մինչև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը: Նման պայմաններում թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործի վարույթը պետք է կասեցվի և գործն ուղարկվի ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:  
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10, 105, 106 և 144 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել, մինչև քաղաքացիական դատավարության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշում կայացնելը:

ԴԱՏԱԿՈՐ՝ Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Ուր է ուղարկվել:  
Երբ:

Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:

25-05-2009

Էջերի քանակը:	153
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
<b>Ամսաթիվ:</b>	25-05-2009
Էջերի քանակը:	153
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	Վերաքննիչ դատարան,
Գրության համարը:	4699
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
<b>Ամսաթիվ:</b>	29-05-2009
<b>Ամսաթիվ:</b>	18-09-2009
<b>Ամսաթիվ:</b>	18-09-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	Վահե Ռաֆայելի Խալաթյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էջմիածին
Դատավորի անուն:	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	23-09-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	03-11-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	25-09-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	1
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	11-11-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	03-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	2
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	18-11-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	11-11-2009

<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	2
<b>Հայցի լուծման ամսաթիվ:</b>	01-12-2009
<b>Հայցի լուծումը:</b>	Մերժվել է
<b>Հոդված</b>	
Հոդված	«Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5,26,12,42,11,43
<b>Հոդված</b>	
Հոդված	ՀՀ քաղ . օր-ի 1112,1125,1121,1122,1137,1131
<b>Հակընդդեմ հայցի լուծումը :</b>	
<b>Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Պատական ակտ (վճիռ, որոշում):</b>	Քաղ. գործ N ՀՔԴ 3/0398/02/08  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ Վ Ճ Ի Ո  ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ Նախագահությամբ դատավոր Վ. ԽԱԼԱԹՅԱՆԻ Քարտուղարությամբ Գ. Գալստյանի Մասնակցությամբ՝ Հայցվորներ՝ Արաքսի Սարյանի, Ռուզան Սարյանի, Կատարինե Սարյանի և Սոֆյա Սարյանի ներկայացուցիչներ (լիազորված անձինք)  Պատասխանող՝ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ (լիազորված անձ)  01.12.2009թ.  Արթուր Պետրոսյանի (անձնագիր թիվ AG 0338790, տրված 15.07.2004թ.. կողմից) Հայկ Հարությունյանի (անձնագիր թիվ AB 0380550, տրված 07.08.1997թ.. կողմից) Վ. Խեչյանի (անձնագիր թիվ AE 0232285, տրված 27.02.1999թ.. կողմից)

ք. Էջմիածին

Պռնբաց դատական նիստում, Էջմիածին քաղաքում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուզան Սարյանի (ՌՂ անձնագիր թիվ 45 08 027119, տրված 02.06.2005թ. կող 772-077-ի կողմից), Կատարինե Սարյանի (անձնագիր թիվ AB 0417212, տրված 12.12.1996թ. կող 011-ի կողմից), Սոֆյա Սարյանի (անձնագիր թիվ AB 0229418, տրված 21.11.1996թ. կող 011-ի կողմից) ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին և Արաքսի Սարյանի (անձնագիր թիվ AB 0229445, տրված 22.11.1996թ. կող 011-ի կողմից, սոց. քարտ 670870042) հայցն ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին.

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Արաքսի Սարյանը ի դեմս ներկայացուցիչ Հայկ Հարությունյանի 25.05.2006թ. հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Տնտեսական դատարան ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության Տնտեսական դատարանի 29.05.2006թ.

որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Հայաստանի Հանրապետության Տնտեսական դատարանի 15.06.2006թ. «Քաղաքացիական գործն ըստ ենթակայության հանձնելու մասին» որոշմամբ, քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի քննությանը:

2006թ. դեկտեմբերի 1-ի վճռով Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, մերժել է:

11.03.2008թ. Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ բեկանվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006թ. վճիռը և գործն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության Հարավային քաղաքացիական դատարան նոր քննության: 02.04.2008թ. Հարավային քաղաքացիական դատարանը գործն ընդունել է վարույթ:

Հայցվորներ Ռուզան Լազարի Սարյանը, Կատարինե Լազարի Սարյանը և Սոֆյա Լազարի Սարյանը 12.03.2008թ. հայցադիմում են ներկայացրել Հարավային քաղաքացիական դատարան ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու մասին:

Հայաստանի Հանրապետության Հարավային քաղաքացիական դատարանի 18.03.2008թ. որոշմամբ Ռուզան Լազարի Սարյանի, Կատարինե Լազարի Սարյանի և Սոֆյա Լազարի Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու մասին, ընդունվել է վարույթ:

11.04.2008թ. որոշմամբ Հարավային քաղաքացիական դատարանը թիվ ՀՔԴ 3/0398/02/08 և թիվ 3/0419/02/08 քաղաքացիական գործերը միացրել է մեկ վարույթում:

Հարավային քաղաքացիական դատարանի 28.10.2008թ. որոշմամբ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործից առանձին վարույթում է առանձնացվել «ՄԱՊ» ՓԲ ընկերության կողմից Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողությամբ երեք տարեկան «Արմավիր», երեք տարեկան «Արմինա», հինգ տարեկան «Արմինա» և յոթ տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը /հատույթ/ պատասխանող «ՄԱՊ» ՓԲ ընկերությունից հոգուտ հայցվորների բռնագանձելու պահանջը: Հարավային քաղաքացիական դատարանի 13.11.2008թ. որոշմամբ թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է, մինչև քաղաքացիական դատավարության կարգով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշում կայացնելը

/ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ/:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը 25.11.2008թ. որոշմամբ վերադարձրել է Հարավային քաղաքացիական դատարանի 19.05.2008թ. որոշման դեմ հայցվորների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը:

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը 06.02.2009թ. որոշմամբ վերադարձրել է Հայաստանի Հանրապետության Հարավային քաղաքացիական դատարանի 19.05.2008թ. «Ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին» որոշման դեմ Սարյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը 06.02.2009թ. մեկ այլ որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2008թ. որոշման դեմ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի թիվ դդ-2 Ե-934 17.03.2009թ. գրությամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 05.02.2009թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 15 հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ուղարկել Հարավային քաղաքացիական դատարանի թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործն ըստ հայցի Արաքսի, Ռուզան, Կատարինե Սարյանների ընդդեմ «ՄԱՊ» ՓԲ ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին՝ հետագա ընթացքը լուծելու համար:

2009թ. մարտի 19-ին քաղաքացիական գործը մուտքագրվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան և 19.03.2009թ. որոշմամբ թիվ ՀՔԴ 3/0398/02/08 քաղաքացիական գործի կասեցված վարույթը վերականգնել է:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվոր Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը դիմելով դատարան, հայտնել է հետևյալը.

Արաքսի Սարյանը 12.08.2003թ.՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն հանդիսանում է հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգը: Վերջինի հեղանակած ստեղծագործությունների թվին է պատկանում 1928 թվականին ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» ստեղծագործությունը /այսուհետ՝ «Ստեղծագործություն 1»/ և 1958 թվականին ստեղծված «Երեկո: Արարատ» ստեղծագործությունը, /այսուհետ՝ «Ստեղծագործություն 2»/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112 հոդվածի և «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ «Օրենք»/ հոդված 5-ի համաձայն, գեղանկարչության ստեղծագործությունները հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտ և ենթակա են պահպանման և պաշտպանության:

Ինչպես հայտնի է, Մարտիրոս Սարյանը մահացել է 1972թ., այսինքն 34 տարի առաջ, ուստի Օրենքի հոդված 26-ի համաձայն, վերջինի գույքային իրավունքները ենթակա են իրավական պահպանության և պատկանում են վերջինի ժառանգին, այսինքն՝ Հայցվորին:

«Հոդված 26. Հեղինակային իրավունքի ժառանգումը և գործողության ժամկետը  
Հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի .... մահից հետո 50 տարի՝ հաշված հեղինակի մահվանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:  
Սույն հոդվածի առաջին.... մասերում նշված ժամկետների ընթացքում ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է հեղինակի ժառանգներին և անցնում է ժառանգաբար.....»:

Օրենքի հոդված 12-ը սահմանում է հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքները.

«Հոդված 12. Հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքները

Հեղինակին կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջն է պատկանում ստեղծագործությունը ցանկացած ձևով .... և ցանկացած եղանակով օգտագործելու բացառիկ իրավունքը:

Հեղինակը կամ հեղինակային իրավունքի այլ իրավատերը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելել իր ստեղծագործության օգտագործումը: Ստեղծագործության օգտագործում է համարվում դրա վերարտադրումը, .... վերամշակումը.....»:

Վերը մեջբերված նորմերի համանման նորմեր են սահմանված նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1125-ի մաս 3-ում, համաձայն որի.

«Հոդված 1125. Ստեղծագործությունն օգտագործելու իրավունքը տնօրինելը Իրավատերը կարող է այլ անձի հանձնել որոշակի սահմաններում ստեղծագործությունն օգտագործելու թույլտվություն /լիցենզիա/: Թույլտվությունը պահանջվում է ստեղծագործությունն, ինչպես նախնական, այնպես էլ վերամշակված ձևով՝ ներառյալ թարգմանության, դաշնակման և այլ, օգտագործելու համար»:

«ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը արտադրում է 0,25, 0,5 և 0,7 լիտր տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», ինչպես նաև 0,25 և 0,5 լիտր տարողունակությամբ 3 տարեկան և 5 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակները, որոնց պիտակի վրա, առանց հայցվորի թույլտվության, պատկերված է ստեղծագործություն 1-ի աղավաղված /վերամշակված/ օրինակը: Պատասխանողը արտադրում է նաև 0,25 և 0,5 լիտր տարողությամբ 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակը, որի պիտակի վրա, նույնպես առանց հայցվորի թույլտվության, պատկերված է Ստեղծագործություն 2-ի աղավաղված /վերամշակված/ օրինակը: Նշվածը խախտում է հայցվորի վերոհիշյալ գույքային իրավունքները և օրենքի հոդված 42-ի 3-րդ պարբերության համաձայն, հանդիսանում է ստեղծագործության նմանակում/կոնտրաֆակտ/:

«Հոդված 42. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտումը Ստեղծագործության.....օրինակները, որոնց պատրաստումը կամ տարածումը հանգեցնում է հեղինակային իրավունքի..... խախտման, համարվում են կեղծ կամ նմանակված /կոնտրաֆակտ/»:

Պատասխանողի իրավախախտ գործողությունների արդյունքում խախտվում է նաև հեղինակի անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքները, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1121-ի մաս 1-ի կետ 3-ով, հոդված 1122-ով և օրենքի հոդված 11-ի 1-ին պարբերության կետ «գ»-ով նախատեսված ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը:

«Հոդված 1121. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները`...

«Հոդված 1122. Ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը Հեղինակին է պատկանում իր ստեղծագործության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և առանց իր համաձայնության որևէ մեկի կողմից փոփոխություններ ու լրացումներ կատարելուց ստեղծագործությունը պաշտպանելու բացառիկ իրավունքը /ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը/:

Ստեղծագործությունը հրապարակելիս, հրապարակայնորեն կատարելիս կամ այլ ձևով օգտագործելիս ստեղծագործության.....մեջ թույլատրվում է փոփոխություն կատարել միայն հեղինակի համաձայնությամբ:

Արգելվում է առանց հեղինակի համաձայնության նրա ստեղծագործությունը հրատարակելիս այն լրացնել նկարագրողումներով, նախաբաններով, վերջաբաններով, մեկնաբանություններով կամ որևէ այլ պարզաբանումներով:

Հեղինակի մահվանից հետո ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքն.... իրականացնում են հեղինակի ժառանգները.... »:

«Հոդված 11. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները

Ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը /արգելել ստեղծագործության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ստեղծագործության հնարավոր աղավաղումները, աղճատումները կամ այլ ոտնձգություններ/»:

Պատասխանողը, առանց հեղինակի համաձայնության, փոփոխություններ և լրացումներ է կատարել ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ Ստեղծագործություն 2-ի մեջ: Այսպես Ստեղծագործություն 1-ի կոնտրաֆակտում Պատասխանողը փոխել է ստեղծագործության գունային

գաման՝ օգտագործելով շատ ավելի վառ և ճշացող գույներ, քան ընտրել էր ստեղծագործության հեղինակ Մարտիրոս Սարյանը, ինչի արդյունքում «Մառախլապատ օրը» վերածվել է «Պայծառ և արևոտ կեսօրի»:

Ստեղծագործություն 1-ի կոնտրաֆակտում կատարվել են նաև այլ անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ: Այսպես, կոնտրաֆակտի աջ հատվածում եկեղեցու փոխարեն, իսկ ձախ հատվածում՝ ծառերի և թփերի փոխարեն պատկերված են կարմիր և կապույտ վերացական երկրաչափական մարմիններ, բացի այդ ավելացվել է ծառերի քանակը, ինչպես նաև կատարվել են բազմաթիվ այլ փոփոխություններ և լրացումներ: Նշված լրացումները և փոփոխությունները բացի այն, որ խախտում են հեղինակի ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը, այլև աղավաղում են Ստեղծագործության ընդհանուր պատկերը:

Ստեղծագործություն 2-ի կոնտրաֆակտում Պատասխանողի կողմից նույնպես կատարվել են անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես փոխվել է ստեղծագործության ընդհանուր գունային գաման և ֆոնը, օգտագործվել են շատ ավելի վառ գույներ, քան ընտրել էր ստեղծագործության հեղինակ Մարտիրոս Սարյանը, բացի այդ կոնտրաֆակտում ավելացվել է գետ, ամբողջությամբ ձևափոխված կերպով են պատկերված Ստեղծագործություն 2-ում առկա ծառերը, բացակայում են նաև Մարտիրոս Սարյանի կողմից պատկերված մարդիկ: Նշված լրացումները և փոփոխությունները նույնպես աղավաղում և, ավելին, զրեթե անձանաչելի են դարձնում Ստեղծագործություն 2-ը:

Նշված օրինախախտ փոփոխությունների արդյունքում խախտվում է նաև հեղինակի՝ ստեղծագործության հեղինակ ձանաչելու /հեղինակության/ իրավունքը: Այսպես, ստեղծագործություն 1-ի ստորին հատվածի աջ անկյունում լատինական տառերով, իսկ ստեղծագործություն 2-ի՝ ձախ անկյունում ռուսական տառերով նշված են ստեղծագործության հեղինակի անունը և ստեղծագործության ստեղծման տարեթիվը, համապատասխանաբար՝ M. Sarian 1928. և M. Capra 1958: Թե Ստեղծագործություն 1-ի և թե Ստեղծագործություն 2-ի կոնտրաֆակտերը հեղինակի վերաբերյալ որևէ նշում չեն պարունակում, ինչը և հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1121-ի մաս 1-ին կետ 1-ով և Օրենքի հոդված 11-ի 1-ին պարբերության կետ «ա»-ով նախատեսված հեղինակի՝ ստեղծագործության հեղինակ ձանաչելու /հեղինակության/ իրավունքի խախտում:

«Հոդված 1121. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները  
Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝  
ստեղծագործության հեղինակ ձանաչելու իրավունքը /հեղինակության իրավունքը/»:

«Հոդված 11. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներ  
Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները  
ա/ ստեղծագործության հեղինակ ձանաչելու իրավունքը /հեղինակության իրավունքը/»:

Փաստորեն, պատասխանողը, առանց հայցվորի թույլտվության, օգտագործելով, ինչպես նաև անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ կատարելով Ստեղծագործություն 1-ի և Ստեղծագործություն 2-ի մեջ, խախտում է ինչպես հայցվորի գույքային, այնպես էլ հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները: Բացի այդ նման եղանակով Ստեղծագործությունների օգտագործումը գցում է Մարտիրոս Սարյանի, թե ընդհանուր արվեստի և թե կոնկրետ Ստեղծագործությունների վարկանիշը, նվազեցնում է նշված Ստեղծագործությունների հետ առնչվող գույքային իրավունքների արժեքը: Բացի այդ ընկնում է նաև հայցվորի գործարար համբավը, քանի որ սպառողների մոտ ստեղծվում է թյուր կարծիք առ այն, թե Մարտիրոս Սարյանի Ստեղծագործությունների նման աղճատված ձևով օգտագործումը թույլատրվում է հայցվորի կողմից:

Հայցվորը նշել է, որ փորձել են պատասխանողի կողմից արտադրված նշված արտադրանքները և վերջինների որակը նրանց չի գոհացրել: Հայցվորը մտադրություն չունի թույլատրել Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների օգտագործումն օրդինար կոնյակների և հատկապես նման որակի արտադրանքի վրա:

Օրենքի հոդված 43-ը սահմանում է հեղինակային իրավունքների

պաշտպանության եղանակները: Նշված հոդվածի 1-ին պարբերության «բ» և «գ» կետերի և 6-րդ պարբերության համաձայն՝ «Հոդված 43. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը  
Հեղինակային իրավունքի.....իրավատերն իր իրավունքները պաշտպանելիս իրավունքը խախտողից կարող է պահանջել՝ մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.  
նմանվող օրինակը, դրա բռնագրավումը և ոչնչացումը  
Հեղինակային իրավունքի ..... իրավատիրոջ .... ստեղծագործության ..... նմանակված օրինակները, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար օգտագործված նյութերը և սարքավորումները դատարանի վճռով կարող են ոչնչացվել»:  
Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1137-ը սահմանում է պատասխանատվություն՝ Ստեղծագործությունն առանց պայմանագրի օգտագործելու համար  
«Հոդված 1137. Պատասխանատվությունը ստեղծագործությունն առանց պայմանագրի օգտագործելու համար  
Առանց իրավատիրոջ հետ պայմանագրի կնքելու ստեղծագործությունն օգտագործող իրավախախտողը պարտավոր է իրավատիրոջը հատուցել նրա կրած վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը: Իրավատերն իրավունք ունի իրավախախտողից վնասների փոխարեն գանձել խախտելու հետևանքով ստացված եկամուտները.....»:  
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 2-ը տալիս է ձեռնարկատիրական գործունեության սահմանումը, այն է.  
«Հոդված 2. Ձեռնարկատիրական գործունեություն  
Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:  
Հայցվորը դատարանից խնդրել է արգելել պատասխանողին Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների պատկերով արտադրանքի արտադրումը և իրացումը: Պարտավորեցնել պատասխանողին սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից Մարտիրոս Սարյանի՝ «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը: Բռնագանձել պատասխանողից և ոչնչացնել Մարտիրոս Սարյանի՝ «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, գովազդային նյութերը և արտադրության միջոցներ: Պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել՝ պատասխանող ընկերության կողմից ցանկացած տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», երեք տարեկան «Արմինա», 5 տարեկան «Արմինա» և 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների իրացումից ստացված եկամուտը՝ 8900 /ուրթ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով, որը պատասխանողը ստացել է հայցվորի կողմից 3 տարեկան «Արմավիր», 3 տարեկան «Արմինա», 5 տարեկան «Արմինա» և 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների մեկական շիշ ձեռք բերելու հետևանքով:  
Հայաստանի Հանրապետության Հարավային քաղաքացիական դատարանի 28.10.2008թ. «Քաղաքացիական գործի վարույթն առանձնացնելու մասին» որոշմամբ, քաղաքացիական գործից առանձին վարույթում է առանձնացվել «ՄԱՊ» ՓԲ ընկերության կողմից Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողության 3 և 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը /հատույթ/, պատասխանողից հօգուտ հայցվորների բռնագանձելու պահանջը:

Պատասխանող «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը ի դեմս ներկայացուցիչ Վ. Խեչյանի հայցադիմումի պատասխան է ներկայացրել դատարան, որով հայտնել է հետևյալը.  
Հայցվոր Արաքսի Սարյանը Ստեղծագործությունները համարելով

կոնտրաֆակտ որևէ գրավոր փաստաթուղթ չի ներկայացրել և չի կարողացել ապացուցել իր պահանջների հիմքում ընկած հանգամանքները: Գտնում է, որ հայցվորի հայցապահանջները անհիմն են, չեն բխում ՀՀ օրենսդրության պահանջներից և հայցադիմումն ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ շարժառիթների և պատճառաբանությունների բերումով:

Հայցվոր Արարքսի Սարյանը դիմելով դատարան չի կարողացել ապացուցել, որ վիճելի իրավահարաբերությունը պատկանում է իրեն: 12.08.2003թ. հայցվորին տրված ըստ ժառանգության իրավունքի վկայագիրը վերաբերում է ժառանգատուի գույքի փոխանցմանը, ինչպես հանցվորին, այնպես մյուս երեք ժառանգներին, սակայն վկայագրում նշված չեն ժառանգական զանգվածի կազմի մեջ մտնող վեճի առարկայի /Ստեղծագործությունների/ մասին ժառանգաբար հայցվորին անցնելը: Հայցվորը դատարանին ներկայացրած հայցադիմումի առաջին նախադասությունը սկսել է հետևյալ շարադրությամբ՝ «Արարքսի Սարյանը /այսուհետ՝ Հայցվոր/ 12.08.2003թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն հայդիսանում է հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգը: Վերջինի հեղինակած ստեղծագործությունների թվին է պատկանում 1928թ. ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» ստեղծագործությունը /այսուհետ Ստեղծագործություն 1/ և 1958թ. ստեղծված «Երեկո: Արարատ» ստեղծագործությունը /այսուհետ Ստեղծագործություն 2/:

Առարկելով հետևյալի դեմ հայտնել է, որ Արարքսի Սարյանը նախ հանդիսանում է ոչ թե Մարտիրոս Սարյանի ժառանգը, այլև վկայագրում է նշված՝ Լազր Սարյանի ժառանգը: Այնուհետև հայցվորը նշել է, «որ հանդիսանում է... Մարտիրոս Սարյանի ժառանգը», սակայն որևէ կերպ չի կարողացել ապացուցել այն հանգամանքը, որ ժառանգատուի ժառանգական զանգվածի կազմի մեջ է մտնում սույն վեճի առարկա է հանդիսացող «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» Ստեղծագործությունները, ինչպես նաև չի կարողացել ապացուցել, որ հենց այդ նույն ստեղծագործությունների նկատմամբ է ժառանգություն ձևակերպել և հեղինակի գույքային իրավունքը ժառանգաբար անցել Հայցվորին:

Հոդված 1131. Հեղինակային իրավունքի գործունեության ժամկետը Սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված ժամկետների ընթացքում հեղինակի գույքային իրավունքը պատկանում է հեղինակի ժառանգներին և անցնում է ժառանգաբար:

Փաստորեն, Հայցվորը պահանջ ներկայացնելով պատասխանողին, չի կարողացել հիմնավորել այն հանգամանքը, որ 12.08.2003թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով հեղինակի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» Ստեղծագործությունները, ինչպես նաև չի կարողացել ապացուցել, որ հենց այդ նույն ստեղծագործությունների նկատմամբ է ժառանգություն ձևակերպել և հեղինակի գույքային իրավունքը ժառանգաբար անցել Հայցվորին: Փաստորեն Հայցվորը պահանջ ներկայացնելով պատասխանողին, չի կարողացել հիմնավորել այն հանգամանքը, որ 12.08.2003թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով հեղինակի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» Ստեղծագործություններն են ժառանգաբար փոխանցվել և /կամ/ ընդունվել ժառանգ Ա. Սարյանի կողմից: Այս պարագայում Հայցվորը չի կարող հանդիսանալ հեղինակային իրավունքի իրավատեր, ուստի և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի ուժով չի կարող թույլատրել կամ արգելել Ստեղծագործության օգտագործումը:

Հոդված 12. Հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքները

Հեղինակը կամ հեղինակային իրավունքի այլ իրավատերը բացառիկ իրավունք ունի թույլատրել կամ արգելել իր ստեղծագործության օգտագործումը:

Հայցվորի կողմից չի ապացուցվել վիճելի Ստեղծագործությունների նկատմամբ իրավատեր լինելու փաստը, ուստի նրա կողմից Պատասխանողին ներկայացված հայցապահանջները անօրինական են: Իսկ, քանի որ Հայցվորը չի կարող լինել վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, նա պարզապես այդ պահանջի իրավունքը չունի և հայցը ամբողջությամբ ենթակա է մերժման: Պատասխանող «ՄԱՊ» ՓԲ ընկերությունը սույն քաղաքացիական գործով չի կարող կողմ հանդիսանալ, քանի որ դեռևս 01.10.2004թ. պատասխանողը «Կերպարվեստի հեղինակային պատվերի» պայմանագիր է կնքել, /այսուհետ՝ «Պայմանագիր»/, համաձայն որի՝ Հեղինակը պարտավորվել է ընկերության

կամ Պատասխանողի հանձնարարությամբ և առաջադրանքով ստեղծել և տրամադրել թվով 4 հատ կոնյակի տարբեր նմուշների պիտակներ՝ Հայկական բնաշխարհի թեմատիկ նկարներով, /այսուհետ՝ Ստեղծագործություն/: Հայցվորի կողմից վիճելի Ստեղծագործությունները հանդիսանում են Պայմանագրի առարկա հանդիսացող՝ Հեղինակի կողմից պատրաստված Ստեղծագործությունների պատվիրատուն օրենքի ուժով հեղինակային իրավունքի խախտման համար պատասխանատվության չի ենթարկվում: Պայմանագրի առարկային համաձայն՝ Ընկերությունը ձեռնարկատիրական նպատակների համար Հեղինակին պատվիրել է «Հայկական բնաշխարհի թեմատիկ նկարներով» ստեղծագործություն չհամաձայնացնելով և չիմանալով հանդերձ, որ Հեղինակը իր պատկերացմամբ ու ընտրությամբ կստեղծի Հայցվորի պնդմամբ վիճարկվող Ստեղծագործություններին, նմանակված Ստեղծագործություններ:

Պատասխանողը չգիտեր և չէր էլ կարող իմանալ, թե ինչ ստեղծագործություն է պատրաստվում իրեն հանձնել Հեղինակը և չէր պատկերացնում անգամ, որ հետագայում Հայցվորի կարող է նման վեճով դիմել դատարան:

Ավելացրել է, որ պայմանագրի 1.3 կետին համաձայն՝ «...Հեղինակի մտավոր գործունեության արդյունքում ստեղծված բոլոր Ստեղծագործությունները հանդիսանում են Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքի օբյեկտ: Հոդինակը բոլոր ստեղծագործությունների նկատմամբ ձեռք է բերում հեղինակային բացառիկ իրավունք»: Պեռ ավելին պայմանագրի 4.1 կետը սահմանում է, որ «Պայմանագրի առարկայի հետ կապված երրորդ անձանց հետ ունեցած վեճերի դեպքում պատասխանատվությունը ամբողջությամբ կրում է Հեղինակը»:

Այս պարագայում ապացուցված է, որ վնասը պատասխանողի մեղքով չի պատճառվել և այն ենթակա է հատուցման:

Հոդված 1058 Վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը

Վնասը պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Պայմանագրի էությունից նույնպես երևում է, որ պատասխանողը չգիտեր և նույնպես չէր կարող իմանալ, թե հեղինակը իր պատկերացմամբ ու ընտրությամբ Հայկական բնաշխարհի թեմատիկ նկարներով Ստեղծագործություններ պատրաստելով իրեն կարող է տրամադրել մեկ ուրիշ Ստեղծագործության փոխանցված և լրանշակված և կամ ինչպես հայցվորն է պնդում կոնտրաֆակտ: Եթե հայցվորը գտնում է, որ պայմանագրով պատվիրված ստեղծագործությունը այլ բան չէ, քան կոնտրաֆակտ, որի օգտագործման հետևանքով իրեն վնաս է հասցվել, ապա նա ՀՀ քաղ. օր. 351 հոդվածի 1-ին մասի ուժով՝ պարտավոր է ընդունել երրորդ անձի կողմից պարտավորության կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 2-րդ մասը սահմանում է պարտավորության ծագման հիմքերը, իսկ 351 հոդվածի 1-ին մասը՝ պարտավորությունը երրորդ անձի կողմից կատարելու պայմանը Հոդված 345. Պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքով նշված այլ հիմքերից:

Հոդված 351. Պարտավորությունը երրորդ անձի կողմից կատարելը.

Պարտապանը կարող է պարտավորության կատարումը դնել երրորդ անձի վրա, եթե օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից կամ դրա էությունից չի բխում պարտավորությունն անձամբ կատարելու պարտապանի պարտականությունը: Այդ դեպքում պարտատերը պարտավոր է ընդունել պարտապանի փոխարեն երրորդ անձի կողմից պարտավորության կատարումը:

Ապացուցված է այն հանգամանքը, որ իրենց կողմից ստեղծագործությունները ձեռք են բերվել օրինական ճանապարհով: Իսկ երրորդ անձանց կողմից ձեռք բերված ստեղծագործությունները «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի ուժով չեն կարող բռնագրավվել: Այսպիսով հայցվորը իրավունք չունի դատարան դիմելու, քանի որ ապացուցված չէ վիճելի իրավահարաբերության պահանջատեր լինելու, այն է՝ Ստեղծագործությունների ժառանգաբար իրեն անցնելու, հետևաբար՝ Ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր լինելու փաստի առկայությունը, ընդսմին, ՀՀ քաղ. դատ. օր. 2-րդ հոդվածի

պահանջն է՝ դատարանից հայցելու իր իրավունքների ..... և օրինական շահերի պաշտպանության համար: Իսկ, քանի որ Հայցվորը վիճելի իրավահարաբերության կողմ չի հանդիսանում, ուստի նա իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք չունի: Վ. Խեչյանը խնդրել է հայցը մերժել:

Ռուզան Սարյանը, Կատարինե Սարյանը և Սոֆյա Սարյանը, հանձինս նրանց ներկայացուցչի Արթուր Պետրոսյանի հայցադիմում են ներկայացրել դատարան՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու մասին, հայտնելով հետևյալը.

Ռուզան Սարյանը, Կատարինե Սարյանը և Սոֆյա Սարյանը /Այսուհետ՝ «Հայցվորներ» 12.08.2003թ.՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն, հանդիսանում են հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգները: Մարտիրոս Սարյանի հեղինակած ստեղծագործությունների թվին է պատկանում 1928 թվականին ստեղծված «Աշնանային մառախուլապատ օր» ստեղծագործությունը /այսուհետ՝ «Ստեղծագործություն 1» և 1958 թվականին ստեղծված «Երեկո: Արարատ» ստեղծագործությունը /այսուհետ՝ «Ստեղծագործություն 2»/:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1112-ի և «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ «Օրենք» 5-րդ հոդվածի համաձայն, գեղանկարչության ստեղծագործությունները հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտ և ենթակա են պահպանման և պաշտպանության:

Ինչպես հայտնի է, Մարտիրոս Սարյանը մահացել է 1972թ., այսինքն 36 տարի առաջ, ուստի, Օրենքի 26 հոդվածի համաձայն, վերջինի գույքային իրավունքները ենթակա են իրավական պահպանության և պատկանում են վերջինի ժառանգին, այսինքն՝ Հայցվորներին:

«Հոդված 26. Հեղինակային իրավունքի ժառանգումը և գործողության ժամկետը հեղինակի գույքային իրավունքները փոխանցվում են ժառանգաբար:

Հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի.....մահից հետո 50 տարի՝ հաշված հեղինակի մահվանը հաջորդող տարվա հունվարի 1-ից: Սույն հոդվածի առաջին.....մասերում նշված ժամկետների ընթացքում ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է հեղինակի ժառանգներին և անցնում է ժառանգաբար....»:

Օրենքի հոդված 12-ը սահմանում է հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքները.

«Հոդված 12. Հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքները

Հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատերը բացառիկ իրավունք ունի թույլատրել կամ արգելել իր ստեղծագործությունը ցանկացած ձևով.....և ցանկացած եղանակով օգտագործելու բացառիկ իրավունքը:

Հեղինակը կամ հեղինակային իրավունքի այլ իրավատերը բացառիկ իրավունք ունի թույլատրել կամ արգելել իր ստեղծագործության օգտագործումը:

Ստեղծագործության օգտագործում է համարվում դրա վերարտադրումը,..... վերամշակումը...»:

Վերը մեջբերված նորմերին համանման նորմեր են սահմանված նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1125-ի մաս 3-ում, համաձայն որի.

«Հոդված 1125.Ստեղծագործությունն օգտագործելու իրավունքը տնօրինելը Իրավատերը կարող է այլ անձի հանձնել որոշակի սահմաններում

ստեղծագործությունն օգտագործելու թույլտվություն /լիցենզիա/:

Թույլտվությունը պահանջվում է ստեղծագործությունն ինչպես նախնական, այնպես էլ վերամշակված ձևով՝ ներառյալ թարգմանության, դաշնակման և այլն, օգտագործելու համար»:

«ՄԱՊ» ՓԲ ընկերությունը արտադրում է 0,25, 0,5 և 0,7 լիտր

տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», ինչպես նաև 0,25 և 0,5 լիտր տարողունակությամբ 3 տարեկան և 5 տարեկան «Արմինա» անվամբ

կոնյակները, որոնց պիտակի վրա, 2004-2006թթ. ընթացքում, առանց Հայցվորների թույլտվության, օգտագործվել է ստեղծագործություն 1-ը:

Պատասխանողը արտադրում է նաև 0,25 և 0,5 լիտր տարողունակությամբ 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակը, որի պիտակի վրա նույնպես 2004-2006թթ. ընթացքում առանց Հայցվորների թույլտվության, օգտագործվել է

Ստեղծագործություն 2-ը:

Նշվածը խախտում է Հայցվորների վերը մեջբերված գույքային իրավունքները և օրենքի 42 հոդվածի 3-րդ պարբերության համաձայն, հանդիսանում է ստեղծագործության նմանակում:

Պատասխանողի իրավախախտ գործողությունների արդյունքում խախտվում է նաև հեղինակի անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքները, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1121-ի մաս 1- կետ 3-ով, հոդված 1122-ով և Օրենքի հոդված 11-ի 1-ին պարբերության կետ «գ»-ով նախատեսված ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը:

«Հոդված 1121. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները`...

«Հոդված 1122. Ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը Հեղինակին է պատկանում իր ստեղծագործության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և առանց իր համաձայնության որևէ մեկի կողմից փոփոխություններ ու լրացումներ կատարելուց ստեղծագործությունը պաշտպանելու բացառիկ իրավունքը /ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը/:

Ստեղծագործությունը հրատարակելիս, հրատարակայնորեն կատարելիս կամ այլ ձևով օգտագործելիս ստեղծագործության.....մեջ թույլատրվում է փոփոխություն կատարել միայն հեղինակի համաձայնությամբ:

Արգելվում է առանց հեղինակի համաձայնության նրա ստեղծագործությունը հրատարակելիս այն լրացնել նկարագարողումներով, նախաբաններով, վերջաբաններով, մեկնաբանություններով կամ որևէ այլ պարզաբանումներով: Հեղինակի մահվանից հետո ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքն.... իրականացնում են հեղինակի ժառանգները....»:

«Հոդված 11. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները Ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները

ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը /արգելել ստեղծագործության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ստեղծագործության հնարավոր աղավաղումները, աղճատումները կամ այլ ոտնձգություններ/»:

Պատասխանողը առանց հեղինակի համաձայնության, փոփոխություններ և լրացումներ է կատարել ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ ստեղծագործություն 2- մեջ: Այսպես ստեղծագործություն 1-ում պատասխանողը փոխել է ստեղծագործության գունային գաման` օգտագործելով շատ ավելի վառ և ճչացող գույներ, քան ընտրել էր ստեղծագործության հեղինակ Մարտիրոս Սարյանը, ինչի արդյունքում «Մառախլապատ օրը» վերածվել է «Պայծառ և արևոտ կեսօրի»: Ստեղծագործություն 1-ում կատարվել են նաև այլ անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ: Այսպես, պիտակի աջ հատվածում եկեղեցու փոխարեն, իսկ ձախ հատվածում` ծառերի և թփերի փոխարեն պատկերված են կարմիր և կապույտ վերացական երկրաչափական մարմիններ, բացի այդ ավելացվել է ծառերի քանակը, լրացումները և փոփոխությունները բացի այն, որ խախտում են հեղինակի ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը, այլև աղավաղում են Ստեղծագործության ընդհանուր պատկերը:

Ստեղծագործություն 2-ում Պատասխանողի կողմից նույնպես կատարվել են անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես փոփոխվել է ստեղծագործության ընդհանուր գունային գաման և ֆոնը, օգտագործվել են շատ ավելի վառ գույներ, քան ընտրել էր ստեղծագործության հեղինակ Մարտիրոս Սարյանը, բացի այդ պիտակում ավելացվել է գետ, ամբողջությամբ ձևափոխված կեպով են պատկերված Ստեղծագործություն 2-ում առկա ծառերը, բացակայում, են նաև Մարտիրոս Սարյանի կողմից պատկերված մարդիկ: Նշված լրացումները և փոփոխությունները նույնպես աղավաղում և, ավելին, զրեթե անձանաչելի են դարձնում Ստեղծագործություն 2-ը:

Նշված օրինախախտ փոփոխությունների արդյունքում խախտվում է նաև հեղինակի` ստեղծագործության հեղինակ ձանաչելու /հեղինակության/ իրավունքը: Այսպես Ստեղծագործություն 1-ի ստորին հատվածի աջ անկյունում լատինական տառերով, իսկ Ստեղծագործություն 2-ի` ձախ անկյունում ռուսական տառերով նշված են ստեղծագործություն հեղինակի անունը և ստեղծագործության ստեղծման տարեթիվը, համապատասխանաբար M. Sarian

1928. և Մ. Сарян 1958: Թե՛ ստեղծագործություն 1-ի և թե՛ ստեղծագործություն 2-ի օգտագործման դեպքում հեղինակի վերաբերյալ որևէ նշում առկա չէ, ինչը և հանդիսանում է ՀՀ քաղ. օրենսգրքի 1121 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Օրենքի 11 հոդվածի 1-ին պարբերության «ա» կետով նախատեսված հեղինակի՝ ստեղծագործության հեղինակ ճանաչելու /հեղինակության/ իրավունքի խախտումը:

«Հոդված 1121. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝ ստեղծագործության հեղինակ ճանաչելու իրավունքը /հեղինակության իրավունքը/»:

«Հոդված 11. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները ստեղծագործության հեղինակին են պատկանում հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները ա/ ստեղծագործության հեղինակ ճանաչելու իրավունքը /հեղինակության իրավունքը/»:

Փաստորեն, պատասխանողը առանց հայցվորի թույլտվության, օգտագործելով, ինչպես նաև անթույլատրելի փոփոխություններ և լրացումներ կատարելով ստեղծագործություն 1-ի և ստեղծագործություն 2-ի մեջ, խախտում է ինչպես հայցվորի գույքային, այնպես էլ հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները: Բացի այդ, նման եղանակով ստեղծագործությունների օգտագործումը գցում է Մարտիրոս Սարյանի, թե՛ ընդհանուր արվեստի և թե՛ կոնկրետ ստեղծագործությունների հետ առնչվող գույքային իրավունքների արժեքը: Բացի այդ, ընկնում է նաև հայցվորների գործարար համբավը, քանի որ սպառողների մոտ ստեղծված է թյուր կարծիք առ այն, թե՛ Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների նման աղճատված ձևով օգտագործումը թույլատրվել է հայցվորների կողմից: Իրենք փորձել են պատասխանողի կողմից արտադրված նշված արտադրանքները և վերջինների որակն իրենց չի գոհացրել: Ի դեպ, հայցվորները մտադրություն չունեին թույլատրել Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների օգտագործումն օրդինար կոնյակների և հատկապես նման որակի արտադրանքի վրա:

Օրենքի հոդված 43-ը սահմանում է հեղինակային իրավունքների պաշտպանության եղանակները: Նշված հոդվածի 1-ին պարբերության «բ» և «գ» կետերի և 6-րդ պարբերության համաձայն՝

«Հոդված 43. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը

Հեղինակային իրավունքի.....իրավատերն իր իրավունքները պաշտպանելիս իրավունքը խախտողից կարող է պահանջել՝ մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.

նմանվող օրինակը, դրա բռնագրավումը և ոչնչացումը

Հեղինակային իրավունքի.....իրավատիրոջ.....ստեղծագործության.....նմանակված օրինակները, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար օգտագործված նյութերը և սարքավորումները դատարանի վճռով կարող են ոչնչացվել»:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1137-ը սահմանում է պատասխանատվություն՝ ստեղծագործությունն առանց պայմանագրի օգտագործելու համար

«Հոդված 1137. Պատասխանատվությունը ստեղծագործությունն առանց պայմանագրի պատագործելու համար

Առանց իրավատիրոջ հետ պայմանագրի կնքելու ստեղծագործությունն օգտագործող իրավախախտողը պարտավոր է իրավատիրոջը հատուցել նրա կրած վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը: Իրավատերն իրավունք ունի իրավախախտողից վնասների փոխարեն գանձել խախտելու հետևանքով ստացված եկամուտները.....»:

Դատարանից խնդրել են արգելել «ՄԱՊ» ՓԲԸ-ին Մարտիրոս Սարյանի

«Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ»

ստեղծագործությունների պատկերով արտադրանքի արտադրումը և իրացումը, պարտավորեցնել «ՄԱՊ» ՓԲԸ-ին սեփական միջոցների հաշվին հետ գնալ կամ այլ կերպով հանել շրջանառությունից Մարտիրոս Սարյանի՝ «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների

օգտագործմամբ ամբողջ արտադրանքը, բռնագրավել «ՄԱՊ» ՓԲԸ-ից և ոչնչացնել Մարտիրոս Սարյանի՝ «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, գովազդային նյութերը և արտադրության միջոցները, «ՄԱՊ» ՓԲԸ-ից հոգուտ հացվորների բռնագանձել «ՄԱՊ» ՓԲԸ-ի կողմից Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ» ստեղծագործությունների օգտագործմամբ արտադրված ցանկացած տարողունակությամբ 3 տարեկան «Արմավիր», 3 տարեկան «Արմինա», 5 տարեկան «Արմինա» և 7 տարեկան «Արմինա» անվամբ կոնյակների իրացումից ստացված ողջ եկամուտը /հասույթը/:

Համաձայն հայցվորների ներկայացուցիչ՝ Ա. Պետրոսյանի «Հայցի հիմքը և պահանջը լրացնելու մասին» հայտարարության, վերջինս խնդրել է.

1. Արգելել «ՄԱՊ» ՓԲԸ-ին Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմինա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրանքի արտադրումը և իրացումը.

2. Պարտավորեցնել «ՄԱՊ» ՓԲԸ-ին սեփական միջոցների հաշվին հետ գնել կամ այլ կերպով հանել շրջանառությունից Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմինա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը.

3. Բռնագրավել «ՄԱՊ» ՓԲԸ-ից և ոչնչացնել Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր», «Երեկո: Արարատ» և «Արմինա» ստեղծագործությունների պատկերների օգտագործմամբ արտադրված ամբողջ արտադրանքը, կիսաֆաբրիկատները, գովազդային նյութերը և արտադրության միջոցները: Հայցվորների ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանը հայտնել է հետևյալը.

«Ստեղծագործություն 1-ի և Պիտակի համեմատության արդյունքում հայտնաբերվում են հետևյալ նմանությունները՝

1. Պիտակը պատրաստելիս գրեթե նույնությամբ օգտագործվել են Ստեղծագործություն 1-ի վրա պատկերված ծառերը: Այսպես, Ստեղծագործություն 1-ի և Պիտակի վրա պատկերված ծառերը: Այսպես, Ստեղծագործություն 1-ի և Պիտակի վրա պատկերված ծառերի, դրանց ստվերների դիրքը, դրանց միջև ընկած հեռավորությունը գրեթե նույնն են: Առավել մանրամասն համեմատենք ծառերից մեկը, օրինակ, Ստեղծագործություն 1-ի վրա պատկերված ծախից աջ 4-րդ ծառը: Նշված ծառը, այլ ծառերի հետ համեմատությամբ, պատկերված է նկարի խորքում, շեղված է դեպի աջ և ծառի բունը, ի տարբերություն այլ ծառերի բների, բաց շագանակագույն է: Ուսումնասիրելով պիտակի վրա պատկերված ծախից աջ 4-րդ ծառը տեսնում ենք, որ այն նույնպես մնացած ծառերի համեմատությամբ պատկերված է նկարի խորքում, այն նույնպես շեղված է դեպի աջ և դրա բունը, ի տարբերություն այլ ծառերի բների, նույնպես բաց շագանակագույն է: Մնացած ծառերը համեմատելու պարագայում մենք կունենանք նույն արդյունքը:

2. Նույնությամբ կրկնվում են նաև Ստեղծագործություն 1-ի և Պիտակի վրա պատկերված կենդանիները: Այսպես, նույնն են ինչպես այդ կենդանիների տեսակը, այնպես էլ դրանց դիրքը՝ միմյանց և այլ օբյեկտների նկատմամբ: Ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ պիտակի վրա պատկերված են /աջից ձախ/ երկու զույգ արածող կենդանիներ, այնուհետև դրանցից ձախ պատկերված են երկու ձի, որոնցից մեկի վրա նստած է հեծյալ: Ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ պիտակի վրա ծախից աջ առաջին ձին և հեծյալը պատկերված են ծախից աջ երկրորդ ձին՝ երրորդ և չորրորդ ծառերի միջև /նշենք, որ նույնն են, անգամ, անգամ ձիերի ոտքերի դիրքը միմյանց նկատմամբ/: Երկու նկարներում են երկրորդ ձիու պոչը դիպչում է չորրորդ ծառի բնին: Ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ Պիտակի վրա ծախից աջ առաջին զույգ արածող կենդանիները պատկերված են ծախից աջ հինգերորդ և վեցերորդ ծառերի միջև և երկու նկարներում էլ այդ կենդանիների գլուխները ուղղված են դեպի աջ: Երկու նկարներում էլ երկրորդ զույգ արածող կենդանիները պատկերված են վեցերորդ և յոթերորդ ծառերի միջև /ավելի մոտ վեցերորդին ծառին/:

3. Ինչպես Ստեղծագործություն 1-ի, այնպես էլ Պիտակի վրա գրեթե նույնությամբ կրկնվում է Արարատ լեռը, այն տարբերությամբ, որ Պիտակի ձևից էլնելով, դրա վրա պատկերված լեռը փոքր ինչ ձգված է:

Ստեղծագործություն 1-ի վրա ծախից աջ վեցերորդ ծառից դեպի վերև պատկերված է երկգմբեթ եկեղեցի, որոնցից աջն ավելի բարձր է քան ձախը: Անմիջապես եկեղեցուց ներքև պատկերված են դեղին և կանաչ գույնի,

հավանաբար, դաշտեր: Համեմատելով Ստեղծագործություն 1-ի այդ հատվածը Պիտակի հետ տեսնում ենք, որ Պիտակի վրա նույնպես ծախից աջ վեցերորդ ծառից դեպի վերև պատկերված են եկեղեցի հիշեցնող երկրաչափական մարմիններ, մասնավորապես գմբեթ հիշեցնող երկու եռանկյունիներ, որոնցից աջը, ինչպես և Ստեղծագործություն 1-ում, ավելի բարձր է քան ծախը: Այնուհետև այդ մարմիններից ներքև պատկերված են նույնպես դեղին և կանաչ գույնի դաշտեր:

Իրենք գտնում են, որ վերը նշված նմանություններն առավել քան բավարար են հաստատված համարելու այն հանգամանքը, որ պիտակը պատրաստելիս Ստեղծագործություն 1-ը օգտագործվել է:

Մարտիրոս Սարյանի «Երեկո: Արարատ» /այսուհետ՝ «Ստեղծագործություն 2»/, «Հայաստան» ստեղծագործության /այսուհետ՝ «Ստեղծագործություն 3»/ և «ՄԱՊ» ՓԲԸ-ի «Արմինա» կոնյակի պիտակի /այսուհետ՝ «Պիտակ 1»/ համեմատությունը:

Ստեղծագործություն 2-ի և Պիտակ 1-ի համեմատության արդյունքում հայտնաբերվում են հետևյալ նմանությունները՝

1. Մեծ Արարատի գագաթը Ստեղծագործությունը 2-ում հարթ է: Գագաթի աջ հատվածում պատկերված է երկու մասից բաղկացած ձնածածկույթ: Ստեղծագործություն 2-ում պահպանված է Փոքր և Մեծ Արարատների համամասնության իրական չափերը /Փոքրը Մեծի համեմատ շատ ավելի փոքր է պատկերված, քան լեռան իրական չափը/:

Ստեղծագործություն 2-ում պատկերված Արարատ լեռը համեմատելով Պիտակ 1-ի վրա պատկերված լեռան հետ, ակնհայտ է դառնում, որ այն վերարտադրված է Ստեղծագործություն 2-ից: Այսպես, Պիտակ 1-ի վրա պատկերված լեռան գագաթը նույնպես հարթ է, դրա աջ հատվածում նույնպես պատկերված է երկու մասից բաղկացած ձնածածկույթ, որը ունի նույն ձևը, ինչ Ստեղծագործություն 2-ի վրա պատկերվածը: Պիտակ 1-ում նույնպես պահպանված է Արարատի փոքր և մեծ գագաթների համամասնությունը:

2. Պիտակ 1-ի կենտրոնում պատկերված է պարող կանանց խումբ, որը նույնությամբ արտապատկերված է Ստեղծագործություն 3-ից:

Ստեղծագործություն 2-ի և 3-ի ու Պիտակ 1-ի միջև առկա վերը նշված նմանությունները նույնպես վկայում են այն մասին, որ Պիտակ 1-ը պատրաստելիս վերը նշված Ստեղծագործությունները օգտագործվել են»:

Քաղաքացիական գործի դատական քննությամբ հայցվորների ներկայացուցիչներ Արթուր Պետրոսյանը և Հայկ Հարությունյանը հայցը պնդել են նույնությամբ: Գործի քննությամբ տրվել են նույնաբովանդակ բացատրություններ:

18.11.2009թ. դատաքննությամբ հայցվորների ներկայացուցիչներ Արթուր Պետրոսյանը և Հայկ Հարությունյանը փորձագետների կողմից դատական քննությամբ տրված պարզաբանումների վերաբերյալ հայտնել են իրենց հետևյալ դիրքորոշումները և առարկությունները:

Փորձագետները խուսափել են ուղղակի պատասխան տալուց դատարանի 28.02.2007թ. որոշմամբ փորձագետներին առաջադրված հարցերին՝ չհիմնավորված շարժառիթներով: Դա կասկած է հարուցում փորձագետների անաչառության վերաբերյալ:

Փորձագետները թերացել են հայցվորին փորձաքննությանը մասնակից դարձնելու հարցում՝ չնայած դատարանի որոշմանը և այն հանգամանքի, որ կողմերի մասնակցությունը փորձաքննությանը չէր խանգարի: Դա նույնպես կասկած է հարուցում փորձագետների անաչառության վերաբերյալ:

Փորձագետներն օժտված չեն համապատասխան մասնագիտական գիտելիքներով կոնտրաֆակտի /նմանակման/ վերաբերյալ, համարում են, որ կոնտրաֆակտը և նմանակումը տարբեր բաներ են, սխալ կերպով նույնացնում են կոնտրաֆակտը և նմանակումը տարբեր բաներ են, սխալ կերպով նույնացնում են կոնտրաֆակտը կրկնօրինակմանը և համարում են, որ որոշակի տարբերություններով /օրինակ մասշտաբով/ վերարտադրությունն առանց բնօրինակի հեղինակի ստորագրության զետեղման զանցանք չի հանդիսանում: Փորձաքննության ընթացքում կիրառված «կոնստրուկտիվ վերլուծության» մեթոդը անհրաժեշտ չէր փորձագետներին առաջադրված հարցի՝

կոնտրաֆակտի հատկանիշներից մեկի՝ ստեղծագործության օգտագործման փոստի /կամ դրա աստիճանի/ վերաբերյալ եզրակացություն տալու համար:

Փորձագետները մոտեցել են փորձաքննությանը որոշակի

նախապաշարուններով և դիտարկել են հարցը մի կողմից Սարյանի հանճարի անհամեմատելիության համոզմամբ և մյուս կողմից այն համոզմամբ, որ նկարի ոչ ճշգրիտ արտանկարումն առանց ստորագրությունների գետեղման զանցանք չէ:

Փորձագետների եզրակացությունները Սարյանի ստեղծագործությունների աննշան աստիճանի օգտագործման վերաբերյալ միանգամայն սխալ է: Այդպես, փորձագետ Ս. Սարուխանյանը հստակ ընդունել է, որ առանց Սարյանի ստեղծագործությունների օգտագործման պիտակների պատկերները ստեղծված լինել չէին կարող: Այսինքն Սարյանի ստեղծագործության օգտագործումն էական էր պիտակի ստեղծման համար: Փորձագետների կողմից ընդունվել է, որ պիտակներում մասնավորապես օգտագործվել են «Աշնանային մառախլապատ օր» ստեղծագործության մեջ առկա ծառերը, կենդանիները, եկեղեցին, Մասիս սարը, «Երեկո: Արարատ» ստեղծագործության մեջ առկա ծառերը, Արարատ լեռը, «Հայաստան» ստեղծագործության մեջ առկա պարող կանանց խումբը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 28.02.2007թ. կայացրել է «Կրկնակի մասնագիտական արվեստաբանական փորձաքննություն նշանակելու մասին» որոշում, որով փորձաքննության իրականացումը հանձնարարել է ՀՀ ՉԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Որոշմամբ փորձագետներին առաջադրել են հետևյալ հարցերը՝ «ՄԱՊ» ՓԲԸ-ի կողմից արտադրված «Արմինա» 7 տարեկան 0.5 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվել է արդյոք Մարտիրոս Սարյանի 1958 թ-ին ստեղծված «Երեկո: Արարատ» և «Հայաստան» ստեղծագործությունները:

«ՄԱՊ» ՓԲԸ-ի կողմից արտադրված «Արմավիր» 0.7 լիտր տարողունակությամբ կոնյակի պիտակը պատրաստելիս օգտագործվել է արդյոք Մարտիրոս Սարյանի 1928 թ-ին ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարը:

Փորձաքննության անցկացման արդյունքում տրվել է թիվ 07-0175 փորձագետի եզրակացությունը: Եզրակացության 4-րդ էջում «Փորձագետի պարզաբանման համար առաջադրված հարցերը» բաժնում նշված է այն հարցը, որի վերաբերյալ փորձագետները տվել են իրենց եզրակացությունը, այն է՝ «Ինչ աստիճանի է օգտագործվել Մարտիրոս Սարյանի 1958թ-ին ստեղծված «Երեկո: Արարատ», 1928թ-ին ստեղծված «Աշնանային մառախլապատ օր», «Հայաստան» գեղանկարները որոշման մեջ նշված պիտակներում»: Փորձաքննություն նշանակելու որոշմամբ առաջադրված հարցի փոփոխման համար փորձագետները հիմք են ընդունել դատավոր Թումանյանի 28.04.2007թ. գրությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 60-ի մաս 3-ի համաձայն

«Հոդված 60. Փորձաքննություն նշանակել

Փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:....»

Որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 19-ի մասեր 2-ը և 5-ը սահմանում են, որ՝ «Հոդված 19. Քաղաքացիական գործեր քննող դատարանի կազմը Վերաքննիչ դատարանում գործերը քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Կոլեգիալ կազմով գործերը քննելիս և առանձին հարցեր լուծելիս բոլոր դատավորներն ունեն հավասար իրավունքներ»:

Նշված նորմից բխում է, որ փորձագետին՝ պարզաբանման ենթակա հարցերը պետք է առաջադրվեն գրավոր որոշմամբ, հետևաբար որևէ հարց փոխելու պարագայում դատարանը նույնպես պետք է կայացնի գրավոր որոշում:

Նշվածից էլ բխում է, որ փորձագետին առաջադրված հարցերը չեն կարող սահմանվել կամ փոփոխվել նաև գրությամբ: Բացի այդ, եթե անգամ ընդունենք, որ հարցերը կարող են փոփոխվել նաև գրությամբ /ինչը մեր կողմից չի ընդունվում/, ապա այդ գրությունը պետք է ստորագրված լինի բոլոր, այլ ոչ թե միայն մեկ դատավորների կողմից:

Տվյալ պարագայում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. կրկնակի մասնագիտական արվեստաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրված հարցերը

փոփոխող դատարանի որևէ որոշում չկա: Առկա է միայն դատավոր Թումանյանի կողմից ստորագրված որոշում, որում շարադրված է որոշման մեջ նշված հարցից տարբերվող հարց: Տվյալ պարագայում գտնում ենք, որ դատարանի վերը նշված որոշումը չի կարող փոփոխվել և ուժի մեջ է, հետևաբար նշված որոշումը փորձագետների համար պարտադիր է և վերջիններս պարտավոր էին պատասխանել այդ որոշմամբ առաջադրված հարցերին: Սակայն փորձագետները որոշմամբ առաջադրված հարցերին այդպես էլ չեն պատասխանել, ինչից հետևում է, որ դատարանի որոշումը մնացել է չկատարված, իսկ նշված եզրակացությունն էլ չի կարող դիտվել որպես թույլատրելի ապացույց:

Վերաքննիչ դատարանը փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ որոշել է նաև «Փորձաքննությանը մասնակից դարձնել կողմերին»: Բացի այդ փորձաքննությանը ներկա գտնվելու գործին մասնակցող անձի իրավունքը սահմանված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 61-ով, համաձայն որի՝ «Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվել փորձաքննությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին»: Փորձագետներին հարց է տրվել, այն մասին, թե արդյոք հայցվորի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայությունը փորձաքննությանը կխանգարի փորձագետներին: Նշված հարցին ի պատասխան փորձագետները հայտնել են, որ հայցվորի ներկայությունը ոչ կօգնե և ոչ էլ կխանգարե փորձագետներին: Նման պայմաններում փորձագետը որևէ իրավունք չունե ր չտեղեկացնելու հայցվորին իրականացվելիք փորձաքննության ժամանակի և վայրի մասին: Այնուհանդերձ փորձագետները հայցվորին չեն տեղեկացրել փորձաքննության իրականացման մասին, ինչի հետևանքով խախտել են ինչպես դատարանի որոշումը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված իրավունքը: Ավելին, դատական նիստի ժամանակ փորձագետ Ավանեսովը, որը հանդիսանում է նաև փորձագիտական կենտրոնի մշակութաբանական փորձաքննությունների բաժնի պետը, ընդունել է, որ գործին մասնակցող անձանց փորձաքննությանը մասնակից չդարձնելը հանդիսանում է իրենց թերացումը և բացթողումը:

Նման պայմաններում գտնում են, որ փորձագետի եզրակացությունը որպես ապացույց ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ ուստի չի կարող ապացույց դիտվել որպես թույլատրելի ապացույց և չի կարող դրվել վճռի հիմքում:

Փորձագետների կողմից տրված պատասխաններից ակնհայտ է, որ վերջիններս մասնագիտացված են ստեղծագործությունների նույնացման վերաբերյալ փորձաքննություններ իրականացնելու մեջ: Այսպես, ինչպես նշել են փորձագետները, իրենք փորձաքննություն իրականացնելիս կիրառել են ստեղծագործության նույնականությունը, այսինքն կրկնօրինակը բնօրինակից տարբերելու համար: Փորձագետները պնդում են, որ պատասխանելու համար այն հարցին, թե արդյոք որևէ ստեղծագործություն մեկ այլ ստեղծագործություն օգտագործվել է թե ոչ անհրաժեշտ է համեմատել այդ ստեղծագործությունների ֆիզիկական չափերը, գույնը, համամասնությունը, պատկերված օբյեկտների քանակը: Փորձագետները նաև նշել են, որ որևէ ստեղծագործության օգտագործումը հաստատելու համար անհրաժեշտ է, որ այդ բոլոր հանգամանքներն առկա լինեն: Անգամ դատարանի հարցին ի պատասխան փորձագետները հայտնել են, որ իրենք կհամարեն, որ Սարյանի նկարը օգտագործվել է եթե կոնյակի պիտակի վրա Սարյանի ստեղծագործությունը պատկերված կլինե ր բնօրինակ չափերով: Սակայն, երբ փորձագետներին հարց տրվեց այն մասին, թե եթե Սարյանի ստեղծագործությունը տպագրվի սև սպիտակ տարբերակով և բնօրինակից փոքր չափի, ապա արդյոք դա կնշանակի, որ տպագրվածը Սարյանի չէ, փորձագետ Ավանեսովը պատասխանոց, որ այդ պարագայում նկարի գույնը և չափը հաշվի չեն առնվի: Նշվածից հետևում է, որ փորձագետների կողմից կիրառվել են միայն մեթոդներ, ինչի արդյունքում փորձագետների եզրակացությունը թերի է:

Բացի այդ, ըստ փորձագետի կոնտրաֆակտը և նմանակում իրականացությունները տարբեր են, այն ինչ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» թե նախկինում և թե ներկայումս գործող օրենքները կոնտրաֆակտ և նմանակում հասկացությունների միջև իմաստային որևէ տարբերություն չեն դնում:

«Հոդված 42. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտումը

Ստեղծագործության, հնչյունագրի /կամ տեսագրության/ օրինակները, որոնց պատրաստումը կամ տարածումը հանգեցնում է հեղինակային իրավունքի և /կամ/ հարակից իրավունքների խախտման, համարվում են կեղծ կամ նմանակված /կոնտրաֆակտ/

Հոդված 65. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտում համարվող գործողությունները

Առանց իրավատիրոջ թույլտվության պատրաստված կամ տարածված իրավունքի օբյեկտի օրինակները համարվում են կեղծ կամ նմանակված /կոնտրաֆակտ/»:

Իրենք գտնում են, որ նշվածը վկայում է այն մասին, որ փորձագետները օժտված չեն համապատասխան մասնագիտական գիտելիքներով կոնտրաֆակտի վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու համար: Բացի այդ, ըստ փորձագետների եթե որևէ մեկը Սարյանի

ստեղծագործություններից մեկը տպագրի /իրական կամ փոփոխված չափերով/, սակայն Սարյանի ստորագրությունը հանի, ապա դա չի դիտվի որպես խախտում: Փորձագետների նշված գնահատականը նույնպես վկայում է վերջիններիս՝ դատարանի կողմից հանձնարարված փորձաքննությունն իրականացնելու համար ոչ բավարար գիտելիքների մասին: Նախ նշել են, որ փորձագետները փորձաքննությունն իրականացնելիս իրավասու չեն այս կամ այն փաստի իրավական գնահատականը տալ՝ առկա է իրավախախտում, թե ոչ: Բացի այդ, փորձագետների կողմից տրված գնահատականն էլ ինքնին ինչպես անհեթեթ և անտրամաբանական է, այնպես էլ ճիշտ չէ: Այսպես, հեղինակային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության համաձայն ստեղծագործության հեղինակ ճանաչելու իրավունքը հանդիսանում է հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքը և եթե որևէ մեկը հեղինակի ստեղծագործությունն օգտագործվում է /օրինական կամ անօրինական եղանակով/, ապա պարտավոր է հեղինակի մասին նշում կատարել: Հետևաբար եթե որևէ մեկը օգտագործի Սարյանի որևէ ստեղծագործություն և չնչի, որ դա Սարյանի ստեղծագործությունն է, ապա դրանով կխախտվի Սարտիրոս Սարյանի՝ ստեղծագործության հեղինակ ճանաչելու՝ հեղինակության իրավունքը:

Բացի այդ փորձագետի կողմից տրված պատասխաններից կասկածներ է առաջանում վերջիններիս անաչառության վերաբերյալ: Այսպես, օրինակ փորձագետ Ավանեսովը ամբողջ դատական նիստի ընթացքում պնդում էր, որ փորձագետն իրավասու չէ պատասխանելու այն հարցին, թե արդյոք Սարյանի ստեղծագործությունն օգտագործվել է թե ոչ, սակայն իրավասու է պատասխանել այն հարցին, թե ինչ աստիճանի է օգտագործվել: Իրենց կարծիքով փորձագետն էլ է հասկանում, որ ինչ-որ չափի օգտագործումը դա օգտագործման մի ձև է, և նման պատասխան տալով փորձում է խուսափել հստակ պատասխանից: Իսկ եթե փորձագետ համարվող անձը դա չի հասկանում, ապա դա նշանակում է, որ վերջինս չունի անհրաժեշտ գիտելիքներ փորձաքննություն իրականացնելու համար:

Փորձագետ Սարուխանյանը հստակ ընդունել է, որ առանց Սարյանի ստեղծագործությունների օգտագործման պիտակների պատկերները ստեղծված լինել չէին կարող: Նշվածը վկայում է այն մասին, որ «ՄԱՊ» ՓԲԸ-ի կոնյակների պիտակները պատրաստելիս Սարյանի ստեղծագործությունները օգտագործվել են, ինչի իրավունքը «ՄԱՊ» ՓԲԸ-ն չի ունեցել:

Բացի այդ, չնայած փորձագետները բազմից նշել են, որ պիտակների վրա առկա պատկերները որևէ կոմպոզիցիոն նմանություն չունեն ստեղծագործությունների հետ, վերջիններս այդպես էլ հստակ չկարողացան նշել, թե կոնկրետ ինչում է կայանում այդ տարբերությունը: Փորձագետները խոսում էին նաև կենդանիների, ծառերի տարբերության մասին, սակայն նույնպես որևէ կոնկրետ տարբերություն վերջիններիս կողմից չմատնանշվեց:

Դատարանից խնդրել են փորձագետների թիվ 07-0175 եզրակացությունը՝ Մարտիրոս Սարյանի ստեղծագործություններն աննշան աստիճանի օգտագործված լինելու մասով գնահատել որպես անարժանահավատ և անթույլատրելի ապացույց և այն չդնել վճռի հիմքում:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Քաղաքացիական գործի դատական քննությամբ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Վ. Խեչյանը հայցվորներ Ռուզան Սարյանի, Կատարինե Սարյանի,

Սոֆյա Սարյանի և Արաքսի Սարյանի հայցադիմումի դեմ՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու և կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու պահանջի մասին, առարկել է:

Գործի քննությամբ վերջինս տվել է հայցադիմումների պատասխաններին /առարկություններին/ համահունչ բացատրություն, խնդրել է հայցվորների պահանջներն ընդդեմ

«ՄԱՊ» ՓԲ ընկերության մերժել:

Պատասխանող «ՄԱՊ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Վ. Խեչյանը հայցադիմումի պատասխան է ներկայացրել դատարան՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը 01.12.2006թ. քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Արաքսի Լազարի Սարյանի ընդդեմ «ՄԱՊ» ՓԲԸ-ի կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, գտել է, «որ բացակայում է հեղինակի և հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ գույքային իրավունքների խախտումը և վճռել է՝ «Հայցվոր Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» ՓԲԸ՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին գտնել անհիմն և մերժել»: Դատարանը վճիռը պատճառաբանել է դատարանի իրավիրված մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից տրված բացատրությունների և նույն հաստատության թիվ 03538 և թիվ 03539 փորձագիտական եզրակացությունների հիման վրա: Հիշյալ փորձագիտական եզրակացություններով փորձագետները հետազոտել են Մ. Սարյանի վիճելի գեղանկարները և կոնյակի պիտակները և համեմատական վերլուծություն կատարելով հանգել են այն հետևության, որ «Պիտակների վրայի նկարները Մ. Սարյանի գեղանկարների կոնտրաֆակտը չեն»: Հիշյալ փորձագիտական եզրակացությունները և դատարանում փորձագետների տված բացատրությունները, որոնց վրա հիմնվել է առաջին ատյանի դատարանը վճիռը կայացնելիս, պետք է գնահատվեն դատարանի կողմից, քանի որ այդ փաստերը իրենց առարկությունների հիմքում ընկած ապացույցներն են, որի հաստատմամբ հերքվում է հայցվորի վկայակոչած հեղինակային իրավունքի խախտման փաստը: Հայցվորի ներկայացուցիչը չհամաձայնվելով վերոհիշյալ փորձագիտական եզրակացության և դատարանի վճռի հետ վերաքննիչ բողոք է բերել և վերաքննիչ դատարանին և 28.02.2007թ. գրավոր միջնորդություն ներկայացրել կրկնակի մասնագիտական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը դատավոր /Ա. Թումանյան/ հայցվորի միջնորդությունը բավարարել է և 28.02.2007թ. որոշում կայացրել, «որ քաղաքացիական գործի ընթացքը ճիշտ լուծելու համարանհրաժեշտ է նշանակել կրկնակի արվեստաբանական փորձաքննություն»: Միևնույն ժամանակ նույնպես հայցվորի ներկայացուցչի միջնորդությամբ վերաքննիչ դատարանը նշանակել է նաև դատահաշվապահական փորձաքննություն:

Փորձաքննությունների կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին: Փորձագետներին պարզաբանման համար առաջադրվել են պատասխանել հետևյալ հարցին «Ինչ աստիճանի է օգտագործվել Մարտիրոս Սարյանի 1958թ. ստեղծված «Երեկո: Արարատ», 1928թ. ստեղծված «Աշնանային մառախլապատ օր», «Հայաստան» գեղանկարները որոշման մեջ պիտակներում»: Արվեստաբանական փորձաքննության ընթացքում փորձագետները կատարելով նկարների և պիտակների համեմատական վերլուծություն և հետազոտություն, նկարների և պիտակների գունային, տոնային, լուսաստվերային և ֆիզիկական չափերի մասշտաբների ուսումնասիրություն, ինչպես նաև արվեստագիտության մեջ ընդունված ունիվերսալ մեթոդի կոնստրուկտիվ վերլուծության արդյունքում հանգել են այն հետևության, որ «Մարտիրոս Սարյանի կողմից ստեղծված «Երեկո: Արարատ», «Աշնանային մառախլապատ օր», «Հայաստան» գեղանկարների և «Արմինա» ու «Արմավիր» պիտակների պատկերների կոմպոզիցիոն լուծումները տարբեր են»: Փորձագետները եկել են այն հետևության, որ «Արմինա» ու «Արմավիր» կոնյակի պիտակը ստեղծելիս աննշան աստիճանի են օգտագործվել Մ. Սարյանի կողմից ստեղծված «Երեկո:

Արարատ», «Աշնանային մառախլապատ օր», «Հայաստան» գեղանկարները, այն էլ միայն թեմա ընտրելու մասով և որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով» Փորձագետները հանգել են այն եզրակացության, որ «Վարպետի ստեղծագործությունը վեր է համեմատական որևէ միտումից, նրանց համոզմամբ կոնտրաֆակտի առումով հարցադրումը, որը ակնկալում է համեմատական վերլուծություն, բնավ տեղին չէ.....»:

Փորձագետներին առաջադրված հարցերին, թե «Ինչ աստիճանի է օգտագործվել» պատասխանել են «Աննշան աստիճան է օգտագործվել.....այն էլ միայն թեմա ընտրելու մասով և որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով»: Ցանկացած անձ իրավունք ունի ցանկացած թեմայով ստեղծագործելու, քանզի յուրաքանչյուր ոք ազատ ստեղծագործման սահմանադրությամբ ամրագրված իրավունք ունի: Իսկ որոշ էլեմենտների հեռավոր նմանությունները այնքան աննշան են, որ չեն կարող դիտվել իբրև հեղինակային իրավունքի խախտում: Ըստ իրենց դատարանը վճիռը կայացնելիս մյուս ապացույցների հետ պետք է գնահատի և հաշվի առնի, ինչպես ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից փորձագետների կողմից տրված մշակութաբանական եզրակացությունները, քանի որ վերաքննիչ դատարանը կրկնակի արվեստաբանական փորձաքննություն կայացնելու որոշման մեջ որևէ կերպ չի հայտնել իր անհամաձայնությունը նախկինում տրված փորձագիտական եզրակացության վերաբերյալ, այլ ընդամենը վերաքննիչ դատարանը գտել է, որ «որ գործի ընթացքը ճիշտ լուծելու համար անհրաժեշտ է նշանակել կրկնակի փորձաքննություն»: Ինչ վերաբերում է հայցվորի երկրորդ պահանջին, որը հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված եկամուտների բռնագանձման մասին է, ապա «ՄԱՊ» ՓԲԸ-ի գործունեության ամբողջ ընթացքում ընկերությունում թողարկված, արտադրված և շաղկված կոնյակների անվանման, հնեցվածության և շշերի տարողության, և տրամաբանական չէր լինի, եթե ընկերությունը իր արտադրանքի շարժի մասին հաշվապահական հաշվառում կատարեր ըստ պիտակների վրա արտացոլված պատկերների: «ՄԱՊ» ՓԲԸ-ն սկսած 2000թ. առ այսօր արտադրում է «Արմինա» և «Արմավիր» տեսակի կոնյակներ, որոնց պիտակների վրայի արտացոլված պատկերները վիճարկման ենթակա պիտակների նկարներից չեն: Վերը շարադրվածը հիմնավորվել է դատա-հաշվապահական փորձագիտական եզրակացությամբ, որը տրվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից:

Քաղաքացիական գործով երրորդ անձ ներգրավված Արմեն Դուկասյանը քաղաքացիական գործի քննությանը չի ներկայացել, որևէ դիրքորոշում դատարանին չի հայտնել, գործը քննության է առնվել վերջինիս բացակայությամբ:

Գործի քննությամբ որպես փորձագետ հարցաքննված Էդ. Ավանեսովը հայտնել է հետևյալը.

«Ցանկացած նկարիչ կարող էր օգտվել Սարյանից, նկարել նույն բնությունը, պատկերները, սակայն տվյալ դեպքում պիտակի և Սարյանի նկարների միջև գեղարվեստական ընդհանրություն չկա: Պիտակի նկարիչը որպես այդպիսին օգտագործել է որոշ էլեմենտներ հեռավոր նմանությամբ և թեմատիկա ընտրելու որոշ մասով, այդպիսին եղել է աննշան, թե այն ինչպես կմեկնաբանվի /տրակտովկա կարվի/ չգիտեն: Իր կողմից փորձաքննության կատարման համար հիմք է հանդիսացել համեմատական վերլուծությունը, որը սակայն չի նշանակում, որ նկարիչը հենց դրանից է օգտվել, բոլորը կարող էին նույնը անել, հազարավորներ, պիտակի և նկարի միջև գեղարվեստական ընդհանուր եզրեր չկան: Սարյանի նկարներն օգտագործվել են այն մասով, ինչ որ տրված է եզրակացության մեջ և պնդում են նույնը: Մոտեցումը նույնն է նաև մյուս նկարների մասով: Կատարվել է լուրջ փորձագիտական աշխատանք: Կոնտրաֆակտի մասին խոսք լինել չի կարող, նմանակման մասին ևս, դրանք տարբեր բաներ են, փորձաքննության հարցերով են իրենք ղեկավարվել: Գունային զամման հնարավոր է նմանակել, սակայն արտանկարումը հանցանք չէ: Նման իրավիճակում համեմատել պիտակը Մ. Սարյանի նկարի հետ վիրավորական է, դրանք անհամեմատելի են: Իրենց կողմից փորձաքննությամբ կատարվել է նկարների ֆրազմենտացիա, կոմպոզիցիոն վերլուծություն՝ օբյեկտների դասավորվածության /կտավի և պիտակի/ կատարվել է նաև հատվածի ուսումնասիրություն: Եկել են համոզման, որ ինչպես «Աշնանային մառախլապատ օր» կտավը այնպես էլ մյուսները նույնը չեն, ինչ պատկերված է

պիտակների վրա, դրանցում կա հեռավոր նմանություն, կոմպոզիցիայի մեջ մտել է գունային լուծումը, տարբեր է գույնը, շինությունը, ստվերները, ծառերի գրաֆիկան, լուսը, ֆոնը, և վերջապես նմանությունն ավելի քիչ է, քան տարբերությունը: Այս ամենը բերել է նրան, որ ինքը նշել է, թե «Կա որոշ նմանություն»: Միայն անուններն են նույնը՝ ծառ, ձի, ստվեր, լույս, մնացած ոչ մի բան նույնը չէ, ոչ մի ընդհանուր բան: Եթե չլինեք Սարյանի այդ նկարը, անկախ մեկ այլ նկարիչ կարող էր այդ նույն էլեմենտների զուգակցմամբ ստեղծել այդպիսի նկար: Փորձաքննությամբ իրենք կիրառել են դրան անհրաժեշտ բոլոր մեթոդները բոլոր ֆրագմենտների վրա, այլ մեթոդներ չեն կիրառվել և իրենք կտային եզրակացություն, որ նմանակվել է Սարյանին, եթե այն /պիտակը/ բացարձակ, կոմպոզիցիայի և մասշտաբային չափերով ամբողջությամբ մեջ համընկներ: Նմանությունը եզրակացության մեջ չի նշվել, նշվել է տարբերությունը, քանի որ նմանությունն աննշան է եղել և որը չէր ազդի եզրակացություն տալու համար: Իրենք պնդում են փորձաքննությամբ տված եզրակացությունը»:

Գործի քննությամբ որպես փորձագետ հարցաքննված Ս. Սարուխանյանը հայտնել է հետևյալը.

«Կան սահմանված մեթոդներ, որոնք օգտագործվել են փորձաքննության ժամանակ: Սարյանը բոլոր ժամանակների մեծագույն հանձարն է, համեմատելի մյուս տաղանդների հետ: Վիճարկող կողմերը պետք է ուշադիր լինեն այդ առումով: Նկարներում պատկերված առարկաների նմանությունը էական նշանակություն չունի: Իր համար վիրավորական է, երբ մեկ հարթության վրա է դրվում Սարյանի և մի ինքնուս նկարչի ստեղծածը, որը Սարյանի հետ որևէ կապ չունի: Թող տարօրինակ չթվա միմյանցից վերցնելու մղումը, գաղտնիքը նրա մեջ չէ, թե ինչ է պատկերված, այլ ինչպես է պատկերված նկարում: Սարյանն իր նկարների մասին ասում է, թե դա տիեզերական ուժի ազդեցությունն է իր վրա, նա ոչ մի նկար կիսատ չի թողել և անցել մյուսին: Փորձաքննությամբ իրենք մինչև գծային մասին հասնելը, բազմաթիվ վերլուծություններ են արել, տարբերությունների առկայությունն ասում է այն մասին, որ պիտակը Սարյանի հետ կապ չունի /նրա նկարի/: Լեոնարդո Դավինչին, մյուս մեծերը օգտագործել են չափորոշիչներ, Սարյանի նկարներում, դրանց մեջ թաքնված են իմաստություն, խորություն: Իրենք կանգնել են ի պաշտպանություն Սարյանի, Սարյանի վրձնահարվածը մեծ է ներգիայի ուժ է, թվում է, թե աստված նրա ձեռքից բռնած նկարել է, մենք գործ ունենք մեծագույն հանձարի հետ: Համեմատական վիճակը վրդովվեցուցիչ է, Սարյանն անհամեմատելի է: Ինքն իրականացրել է փորձաքննության անալիզ, որից եկել է համոզման, որ Սարյանի վրձնահարվածը երևակայությունից դուրս բան է, հարկ է հոգ տանել Սարյանի մասին, մասունքի և աչքի լույսի պես պահել նրա ստեղծածը: Ինքն իր գործն արել և իր պատասխանը արվեստագիտական չափանիշն է: Պիտակի նկարիչը ոչ փորձել է նմանակի Սարյանին, ոչ էլ այլ բան, քան որ ինքնուս է: Սարյանի ստեղծագործություններն իրենք ստրուկտուրալ անալիզի են ենթարկել, պարզելու նույնությունը: Եթե նույնիսկ լինեք նույնը՝ Սարյան չէր լինի: Դա որոշիչ չէ, թե Ղուկասյանն անտաղանդ է եղել, այդպես վարվել: Թեմայի նմանություն կա այնքանով, որքանով որ երկուսն էլ բնանկար է: Վիզուալ նմանություն կա, բայց դետալ առ դետալ նայելիս հասկանում ես, որ հիշել, նկարել է, համեմատելի է, օգտագործում են շատերը:

Իրենք պնդում են տրված եզրակացությունը»:

Գործի քննությամբ որպես փորձագետ հարցաքննված Յու. Ավետիսյանը հայտնել է հետևյալը.

«Փորձաքննությունների ազգային բյուրոյում» ստացվել է դատարանի որոշում, որով առաջադրվել է երկու հարց՝ պարզելու Ղուկասյանի և Խաչատրյանի ստորագրությունների վաղեմությունը, կնիքի վաղեմությունը, որի առիթով իրենց կողմից տրվել է եզրակացություն անհնարինության մասին, որն իրենք մեկնաբանել են՝ մեթոդիկայի և անհրաժեշտ սարքերի բացակայության պատճառով: Կնիքի թանաքի գույնով հնարավոր չէ պարզել վաղեմությունը, կնիքի դրոշմի վաղեմություն, աշխարհում հնարավոր չէ պարզել: Ինքը՝ փորձագետն օգտվել է էլակետային տվյալներից, այլ ոչ օդից, այլ եղանակներով պարզելը դուրս է սահմանված մեթոդիկայից»:

4.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և դրանք հաստատող ապացույցները.

<Ետագոտվել են հետևյալ գրավոր փաստաթղթերը.

• 25.05.2006թ. Արաքսի Սարյանի կողմից ներկայացված հայցադիմում

համաձայն որի, Արաքսի Սարյանը և վերջինիս ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը խնդրել են դատարանից «ՄԱՊ» ՓԲԸ-ի կողմից կոնտրաֆակտի օգտագործումը արգելել և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձել:

- Հայցի վերաբերյալ «ՄԱՊ» ՓԲ ընկերության հայցադիմումի պատասխան:
- «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ թիվ 03538 և թիվ 03539 փորձաքննությունների եզրակացություններ:
- Թիվ 03538 Փորձագիտական եզրակացության համաձայն, փորձաքննության են ներկայացվել Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարի քերուպատճեն և պիտակ՝ կոնյակի շշի, որի մանրագննին փորձաքննության արդյունքում պարզվել է, որ պիտակի վրա պատկերված նկարը Մ. Սարյանի 1928թ. ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարի նմանակում համարվել չի կարող, քանի որ առաջին իսկ հայացքից ակներև են բացահայտ տարբերություններ, պիտակի նկարներում այլ ստեղծագործությունների նմանակումներ չկան:
- Թիվ 03539 Փորձագիտական եզրակացության համաձայն, փորձաքննության են ներկայացվել Մ. Սարյանի «Երեկո: Արարատ» գեղանկարի քերուպատճեն և պիտակի՝ կոնյակի շշի, որի մանրագննին փորձաքննության արդյունքում պարզվել է, որ պիտակի վրա պատկերված նկարը Մ. Սարյանի «Երեկո: Արարատ» ստեղծագործության նմանակում համարվել չի կարող, քանի որ առաջին իսկ հայացքից ակներև են բացահայտ տարբերություններ:
- Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 01.12.2006թ. վճիռ համաձայն որի, դատարանը հայցվոր Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» ՓԲԸ-ի՝ կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, գտել է անհիմն և մերժել է:
- 14.02.2008թ. հայցվոր Արաքսի Սարյանի ներկայացուցիչ Արթուր Պետրոսյանի բացատրություններ, համաձայն որի, վերջինս ներկայացրել է նախապատմությունը, վեճի նկարագրությունը և պահանջը:
- Հայցվորներ Ռուզան Լազարի Սարյանի, Կատարինե Սարյանի, Սոֆյա Սարյանի 17.03.2008թ. հայցադիմումը ընդդեմ «ՄԱՊ» ՓԲԸ-ի՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջով:
- 12.08.2003թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր համաձայն որի, Լազր Սարյանի, մահացած 1998թ. մայիսի 27-ին, զույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսանում Արաքսի, Ռուբեն, Սոֆյա, Կատարինե, Ռուզան Սարյանները: Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը բաղկացած է հեղինակային իրավունքից, համաձայն «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության կողմից 15.07.2003թ. տրված 07/192 տեղեկանքի, որը պատկանել է Մ. Սարյանին, մահացած 1972թ. մայիսի 5-ին, որի ժառանգն հանդիսացել է որդին՝ Լազր Սարյանը, որն ընդունել է ժառանգությունը, սակայն այն չի ձևակերպել:
- «ՄԱՊ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վ. Խեչյանի հայցադիմումի պատասխան համաձայն որի խնդրել է Արաքսի Սարյանի ընդդեմ «ՄԱՊ» ՓԲԸ-ի կոնտրաֆակտի օգտագործումն արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին համարել անհիմն և այն մերժել ամբողջությամբ:
- Հետազոտվել են նաև գործում առկա կոնյակների պիտակները և Մ. Սարյանի գեղանկարների ֆոտոպատճենները, լուսապատճենները:

- Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 07-0175 եզրակացություն, համաձայն որի «Արմինա» կոնյակի պիտակը ստեղծելիս աննշան աստիճանի են օգտագործվել Մ. Սարյանի կողմից ստեղծված «Երեկո: Արարատ» և «Հայաստան» գեղանկարները, այն էլ միայն թեմա ընտրելու մասով և որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով: Նույնը նշվել է նաև «Արմավիր» կոնյակի մասով:
- ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված թիվ 07-0175 փորձաքննության եզրակացության համաձայն, փորձաքննության ներկայացված «Երեկո: Արարատ» /1958թ., կտավ, յուղաներկ, 43.5 սմ x 63.0սմ/ և «Հայաստան» /1923թ., կտավ, յուղաներկ, 138.0սմ x 103.0 սմ/ գողանկարների լուսանկարների ու «Արմինա» /3.0սմ x 5.3սմ/ կոնյակի պիտակի հետազոտությունների արդյունքում պարզաբանվել է

այն հարցի պատասխանը, որը տրված էր փորձագետներին՝ պարզաբանման համար.

«Հետազոտելով Մարտիրոս Սարյանի կողմից ստեղծված «Երեկո: Արարատ» և «Հայաստան» գեղանկարների և «Արմինա» կոնյակի պիտակի պատկերները, ակնհայտ է դառնում, որ առկա է դրանց կոմպոզիցիոն լուծումների բացահայտ տարբերությունները:

Համեմատվող պատկերների կոմպոզիցիաները միանշանակ տարբեր են՝ Արարատ լեռը, նրա տեղը պատկերների վրա, նրա հեռանկարային խորությունը և գունային լուծումը, տանը և լուսաստվերները միանշանակ տարբերվում են իրարից: Տարբեր են նաև ծառերի տեղադրումը պատկերների վրա նրանց քանակը, գունային, տոնային և լուսաստվերային լուծումները: Տարբեր են նաև պատկերների վրա նրանց քանակը, գունային, տոնային և լուսաստվերային լուծումները: Տարբեր են նաև պատկերների վրա տեղ գտած մարդկանց դիրքը, քանակը, գունային և լուսաստվերային լուծումները: Մ. Սարյանի «Երեկո: Արարատ» նկարի վրա պատկերված է արահետ՝ կոմպոզիցիայի գրեթե կենտրոնում, իսկ «Արմինա» կոնյակի պիտակում այն բացակայում է, «Արմինա» կոնյակի պիտակի աջ հատվածում նկարված է գետ, որը չկա Մ. Սարյանի «Երեկո: Արարատ» նկար վրա: Համեմատելով «Երեկո: Արարատ» գեղանկարը և «Արմինա» կոնյակի պիտակի պատկերները, տեսնում ենք, որ գետինը նույնպես ոչ մի գծանկարչական և գունային նմանություն չունի, ինչը կարել է ասել նաև երկնքի մասին: Ինչ վերաբերվում է Մ. Սարյանի «Հայաստան» գեղանկարի և «Արմինա» կոնյակի պիտակի համեմատությանը, ապա այստեղ ընդհանրապես չկա ոչ մի կոմպոզիցիոն և գունային նմանություն: Համեմատելով Մ. Սարյանի կողմից ստեղծված «Երեկո: Արարատ» գեղանկարը և «Արմինա» կոնյակի պիտակի պատկերի ֆիզիկական չափերը և համեմատությունները, պետք է եզրակացնել, որ նրանք ակնհայտորեն տարբերվում են՝ իրարից՝ /«Երեկո: Արարատ» գեղանկարը՝ 63.0 սմ: 43.0սմ= 1.45 միավոր, «Արմինա» կոնյակի պիտակ՝ 5.3սմ:3.0սմ= 1.77 միավոր համեմատական համամասնության տարբերությունը կազմում է -32 միավոր/:

«Արմինա» կոնյակի պիտակը ստեղծելիս աննշան աստիճանի են օգտագործվել Մ. Սարյանի կողմից ստեղծված «Երեկո: Արարատ» և «Հայաստան» գեղանկարները, այն էլ միայն թեմա ընտրելու մասով և որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով:

Փորձաքննությանը ներկայացված «Աշնանային մառախլապատ օր» /1928թ., կտավ, յուղաներկ, 59.0սմ x 73.0սմ/գեղանկարի լուսանկարների և «Արմավիր» /3.2սմ x 5.8սմ/ կոնյակի պիտակի հետազոտությունների արդյունքում պարզաբանվեց այն հարցի պատասխանը, որը տրված էր փորձագետների պարզաբանման համար:

Հետազոտելով Մարտիրոս Սարյանի կողմից ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարի և «Արմավիր» կոնյակի պիտակի պատկերները, ակնհայտ է դառնում, որ առկա է դրանց կոմպոզիցիոն լուծումների տարբերությունները: Համեմատվող պատկերների կոմպոզիցիաները միանշանակ տարբեր են իրարից: Տարբեր են նաև ծառերի տեղադրումը պատկերների վրա՝ նրանց քանակը և տեսակը, գունային, տոնային և լուսաստվերային լուծումները: Տարբեր են նաև պատկերների վրա տեղ գտած կենդանիների դիրքը, գունային և լուսաստվերային լուծումները: Մ. Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» նկարի վրա պատկերված երկգմբեթանի եկեղեցին և հարակից շինությունը միանշանակ տարբերվում են «Արմավիր» կոնյակի պիտակում պատկերված եկեղեցուց և շինությունից իրենց գծանկարով , գունային, տոնային և լուսաստվերային լուծումներով:

Համեմատելով «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարը և «Արմավիր» կոնյակի պիտակի պատկերի ֆիզիկական չափերը և համամասնությունները, պետք է եզրակացնել, որ նրանք ակնհայտորեն տարբերվում են իրարից՝ /«Աշնանային մառախլապատ օր» գեղանկար՝ 59.0սմ: 73.0 սմ=1.24 միավոր, «Արմավիր» կոնյակի պիտակ՝ 3.2սմ : 5.8սմ =1.81 միավոր, համեմատական համամասնության տարբերությունը կազմում է -0.57 միավոր/:

«Արմավիր» կոնյակի պիտակը ստեղծելիս աննշան աստիճանի է օգտագործվել Մ. Սարյանի կողմից ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարը, այն էլ միայն թեմա ընտրելու մասով և որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով:

Համաձայն փորձաքննության եզրակացության, ներկայացվել է Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» ստեղծագործության

կառուցողական առանձնահատկությունների, դրանց օրինաչափությունների /որը արվեստագետի ստեղծագործական ֆենոմենի յուրահատուկ դրսևորման պայմանն է/ արվեստաբանության մեջ ընդունված վերլուծություն:

Վերլուծության համար հիմք է հանդիսացել արվեստաբան Շ. Խաչատրյանի հեղինակությամբ հրատարակված ալբոմում /Սամարայի «Ազնի» հրատարակչություն, 2003թ./ Մարտիրոս Սարյանի /«Աշնանային մառախլապատ օր»/կտավ, յուղաներկ, 1948թ. չափ՝ 59-73 սմ/ նկարի վերատպությունը՝ 15,4-19,4սմ չափերով:

Փորձաքննությամբ ներկայացվել է ըստ ունիվերսալ օրենքի հետևյալ գծապատկերը, որը կառուցվում է հետևյալ կերպ. DC բացվածքով իջեցնում կոր AD հատվածին, կստանանք A2 կետը, որից ուղղահայաց վեր՝ B1 կետը: D անկյունից տանենք ուղիղ դեպի B անկյունը, որը կորի հետ հատումից կստանանք a կետը: A անկյունից տանենք ուղիղ a կետով, կստանանք B3 կետը, որից իջեցնենք ուղիղ, կստանանք A4 կետը: Այս կետից տանենք ուղիղ դեպի B կետը, որը AB4 ուղիղի հետ հաստատումից կստանանք b կետը: AC և DB ուղիղների հատումից կստանանք կենտրոնական O կետը, նաև b2 d5 a2 կետերը: Ստացված սխեման համեմատական կարգով փոխադրելով նկարի վերատպության վրա հիմք է հանդիսացել հետագա կառուցողական վերլուծությունը: Ստացված կետերը, հատվածները ստացվել են ինքնաբերաբար, առանց նախապես նշելու չափային առումով որևէ հատված: Այսպես A2 կետի ստացման անալոգիայով ստացվել է B1 կետը A4 անալոգիայով B3 կետը, նույն O1O2 կենտրոնական ուղղագիծը, այնուհետև DO2 բացվածքով կորի միջոցով C1 կետը, նույն անալոգիայով AO2 բացվածքով ստանում ենք B1 կետը, CB3 բացվածքով C3 կետը և տարբեր այլ կետեր՝ նաև պատկերի մակերեսին, օրինակ՝ A4B հատվածը անցնում է միայնակ մարդու ստորին կետով, այդ կետով է անցնում նաև AB3 ուղիղը, b և արդեն ստացված b2 բացվածքով և B3 B1 ուղիղի հատումից առաջանում է B1 կետը: Այսպես b և b1 կետերի միացումից ստանում ենք ծառի բարձրությունը: Նույն կորի և արդեն հայտնի A4 a կորի հատումից ստանում ենք b3 կետը, որից ուղիղ դեպի վեր և հատվելով o2 b2 կորի հետ, ստանում ենք b կետը: Այսպիսով ստացանք b3 b4 հատվածը, որը Մեծ Մասիսի բարձրությունն է: Այսպես հայտնաբերում ենք ակամա, որ ծառի և Մեծ Մասիսի բարձրությունները հավասար են: b1c1 և bc2 ուղիղների հատումից՝ c2 կետը /նկարի աջ հատվածի վերին մասի փոքր ծառի գագաթը: CC3 բացվածքով դեպի B3 գծված կորը և A4B5 ուղիղի հատումից կստանանք C4 կետը /փոքր եկեղեցու գագաթը/ bb4 կորի և A3B5 ուղիղի հատումից C3 կետը /մեծ եկեղեցու գագաթը, որը ստացվում է նաև B2 C4 ուղիղով/: Նույն bb4 շարունակվող կորի և C3O2 ուղիղ հատումից՝ d կետը /նկարի աջ կողմի զույգ ցուլերի միջև առաջացած եռանկյունաձև բացվածքի գագաթը /, C2O2 և A4B3 ուղիղի հատումից կստացվի d1 կետը, որ հատումից A4B3 ուղիղի հետ կստացվի d1 կետը: Կհայտնաբերենք նաև, որ ad1 հավասար bd2-ին:

Այսպես անընդհատ կարող ենք շարունակել՝ ստանալով բազմաթիվ կետեր և հատումներ, որոնք ստեղծելով նոր հարաբերումներ, կբերեն ընդհուպ ամենաաննշան թվացող վրձնահարվածի հայտնաբերմանը: Նշել են, որ կետերի և հատվածների նկարագրված կարգը կարելի է խախտել, կարելի է դիմել տարբեր բացվածքներ ունեցող կորերի, շրջանագծերի, միմյանց և տարբեր ուղիների հետ հատումներին, միևնույնն է՝ արդյունքը կլինի անփոփոխ:

Անփոփոխ, որովհետև այստեղ իշխում է բացարձակ հարմոնիան, որ վարպետը զգացել և վերակերտել է գերզգայական, անքննելի բնատուր տաղանդով:

Նկարի վերատպությունում բոլոր հատվածները տիեզերական բարձրագույն հարմոնիայի խորհուրդն են կրում, և ոչ միայն ուղղակի հատվածները, այլ նրանց հատումներից ծնված նորանոր մեծ և փոքր հատվածները: Այսպես է, որովհետև ստացված և դեռևս բազում ստացվելիք հատվածների հարաբերությունը բոլոր մեծ և փոքր հատվածների հետ, համապատասխանում է «Ուկե հատման» օրենքին, ըստ հետազոտվող պատկերի չափերի: Որպեսզի համոզվենք, կարող ենք վերցնել օրինակ AC հատվածը և ըստ «Ուկե հատման» օրենքի /հատվածի չափ x 61-ով, կամ 39-ով բաժանած 10-ի/ ստանանք հետևյալ հարաբերությունը՝ AD: AA5: AA2 և այսպես բոլոր մնացած հարաբերությունները:

Հանձարի իր հզոր կամքի զորությամբ վարպետը վրձնել է բարձրագույն հարմոնիայի ոգեղեն շնչով տոգորված մի գործ, մի հզոր տիեզերական կառույց՝ հազցնելով նրան իր նվիրական երկրի մոտիվները, իր երկրի մի պատառիկ պատկերին հաղորդելով վերերկյա, անսեկնելի մի իմաստությունը, բացելով

նրա խորհուրդը որպես տիեզերական մոդել, տիեզերական մասունք, միկրոկոսմ:

Վարպետի ստեղծագործությունը ընդհանրապես հնարավոր չէ գնահատել որևէ պատկերի իկոնոգրաֆիական առումով: Այստեղ խոսք կարող է լինել միայն մոդելավորման մասին, որտեղ ամեն մի պատկեր, ամեն մի գունաբիծ հավասարազոր որժեք ունեն նկարի ընդհանուր տարածական բնորոշումներում: Մտովի վարպետի նկարից հեռացրեք մի գունաբիծ, աննշան թվացող մի վրձնահարված և նկարը կվերածվի մի անշարժ պատկերի: Վարպետից ազդվել են շատ նշանավոր նկարիչներ, նույնիսկ փորձել են նրան գերազանցելու համար առավել վառ գույներով նկարել, բայց վարպետի գործերի կողքին դրանք ավելի մռայլ են դիտվել, որովհետև նրանց անհայտ է մնացել վարպետի ստեղծագործությունների ներսից բխող լույսի գաղտնիքը: Խորհենք մի պահ. միթե պատկերային առումով ավելի ընկալելի ծառեր կամ կենդանիներ, առավել ևս մարդկային պատկերներ չեն ստեղծվել: Սարյան հանճարը մնացել է անբացատրելի,

նրա արարման գաղտնիքը մնացել է և կմնա անմեկնելի: Սարյան արվեստագետին հնարավոր չէ կրկնել, նրա արվեստում ամեն մի վրձնահարված գտնում է իր տեղը միկրոնի ճշտությամբ:

Վարպետի ստեղծագործությունը վեր է համեմատական որևէ միտումից, կոնտրաֆակտի առումով հարցադրումը, որը ակնկալում է համեմատական վերլուծություն՝ բնավ տեղին չէ և ժամանակը անպայման կբերի վարպետի գործերը բննելու առավել լիարժեք պահանջ և կհասկանանք, որ անհամեմատելին երբևէ համեմատելի լինել չի կարող, որքան էլ տրամաբանորեն արդարացնենք նման պահանջը»:

5. Դատարանի իրավական վերլուծությունները.

Դատարանը, լսելով հայցվորներ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանին, Արթուր Պետրոսյանին, պատասխանող՝ «ՄԱՊ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Վարդան Խեչյանին, փորձագետներ Է. Ավանեսովին, Ս. Սարուխանյանին, Յու. Ավետիսյանին, հետազոտելով Արաքսի Սարյանի հայցադիմումն ընդդեմ «ՄԱՊ» ՓԲ ընկերության, հայցադիմումի պատասխանը, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցադիմումն ընդդեմ «ՄԱՊ» ՓԲ ընկերության, հայցադիմումի պատասխանը, գործով ներկայացված յուրաքանչյուր ապացույց, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ Արաքսի, Ռուզան, Կատարինե և Սոֆյա Սարյանների հայցն ընդդեմ «ՄԱՊ» ՓԲ ընկերության, ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորները հայց հարուցելով ընդդեմ պատասխանողի, դատարանից խնդրել են համապատասխանաբար՝ արգելել կոնտրաֆակտի օգտագործումը, բռնազանձել կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները և դադարեցնել հեղինակային իրավունքի խախտումը և բռնազանձել ստացված եկամուտները: Իրենց պահանջի հիմքում հայցվորները դրել են հետևյալ հիմնավորումները և կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերը. Իրենք համաձայն «Ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագրի, հանդիսանում են հայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ժառանգները: Վերջինիս հեղինակած ստեղծագործությունների թվին են պատկանում «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ»

ստեղծագործությունները, որոնք հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտ և ենթակա են պահպանման և պաշտպանության և որի պահանջի իրավունքը պատկանում է իրենց՝ հայցվորներին: Վերջիններս վկայակոչել են Հայաստանի Հանրապետության օրենքը՝ «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» իր համապատասխան նորմերով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112 հոդվածը, 1125 հոդվածը, 1121, 1122, 1137, 1131 հոդվածները՝ որպես կիրառելի իրավանորմեր սույն քաղաքացիական իրավադատության լուծման համար: Մեջբերելով և վկայակոչելով նշված հոդվածները, հայցվորները գտել են, որ հեղինային իրավունքը պատկանում է իրենց՝ Ս. Սարյանի ժառանգներին, իրավատիրոջն է պատկանում ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով օգտագործելու բացառիկ իրավունքը, իրավատերը /հայցվորները/ կարող է այլ անձի հանձնել որոշակի սահմաններում ստեղծագործությունն օգտագործելու թույլտվություն, և որ պատասխանողի իրավախախտ՝ նշված նորմերի պահանջները չկատարող

գործողությունների հետևանքով և արդյունքում խախտվել է հեղինակի անձնական գույքային բացառիկ իրավունքները, ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը: Պատասխանողն առանց հեղինակի համաձայնության, փոփոխություններ և լրացումներ է կատարել ինչպես մեկ, այնպես էլ մյուս ստեղծագործության մեջ, իրականացրել է կոնտրաֆակտ, աղձատել, փոփոխել և լրացրել է դրանք՝ խախտելով ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը, աղավաղել ընդհանուր պատկերը, անձանաչելի դարձրել դրանք: Այդ ամենը զցում է Մ. Սարյանի արվեստի վարկանիշը, նվազեցնում արժեքը, հայցվորների գործարար համբավը: Իրենք պատասխանողին թույլ չեն տվել այդ ամենն անելու, Մ. Սարյանի նկարներով պիտակով արտադրանք իրականացնելու:

Քաղաքացիական գործով ներկայացված ապացույցներով, գործի քննությամբ հայցվորների վերը նշված փոստարկները՝ իրավունքի խախտումը պատասխանողի կողմից, նրա ոչ օրինաչափ, իրավախախտ գործողությունները չեն հիմնավորվել: Այո, Սարյաններն անառարկելիորեն հանդիսանում են Մարտիրոս Սարյանի ժառանգները, այո «ՄԱՊ» ՓԲԸ-ն արտադրել է որոշակի արտադրանք որոշակի պիտակներով: Դրանք ըստ հայցվորների արտատպված են, նմանակված Մ. Սարյանի համանուն ստեղծագործություններից, առկա է կոնտրաֆակտ: Սակայն այդուհանդերձ վերը նշված հանգամանքները անհիմն են, քանի որ չեն բխում ոչ գործի ապացույցներից, ոչ էլ իրական տվյալներից: Այդպիսիք հերքվել են քաղաքացիական գործի շրջանակներում նշանակված փորձաքննությունների եզրակացություններով հատկապես, և գործի մյուս ապացույցներով՝ մասնավորապես: Նշված եզրակացություններով ակներև է այն հանգամանքը, որ պատասխանողի կողմից Մարտիրոս Սարյանի «Աշնանային մառախլապատ օր» և «Երեկո: Արարատ»

ստեղծագործությունների նմանակում, կոնտրաֆակտ առկա չէ, իսկ «Արմավիր» կոնյակի պիտակը ստեղծելիս աննշան աստիճանի է օգտագործվել Մ. Սարյանի կողմից ստեղծված «Աշնանային մառախլապատ օր» գեղանկարը, այն էլ միայն թեմա ընտրելու մասով որոշ էլեմենտների հեռավոր նմանություններով:

Համապատասխան փորձաքննությամբ, փորձագետը եկել է հետևյալ հետևությանը. «Վարպետի ստեղծագործությունը վեր է համեմատական որևէ միտումից, կոնտրաֆակտի առումով հարցադրումը, որը ակնկալում է համեմատական վերլուծություն՝ բնավ տեղին չէ և ժամանակը անպայման կբերի վարպետի գործերը քննելու առավել լիարժեք պահանջ և կհասկանանք, որ անհամեմատելին երբևէ համեմատելի լինել չի կարող, որքան էլ տրամաբանորեն արդարացնենք նման պահանջը», այսպիսով բացառելով Մ. Սարյանի և «ՄԱՊ» ՓԲԸ-ի արտադրանքի վրա առկա պիտակների նմանակման, արտատպման, և կոնտրաֆակտի առկայությունն ընդհանրապես: Վերը նշված հանգամանքների առկայությամբ, և հայցվորների փաստարկների հերքված լինելու պայմաններում, դատարանը գտնում է, որ հայցը բավարարելու հիմքեր չկան:

Դատարանը պետական տուրքի հարցը համարում է լուծված:

Դատարանը, քննարկելով դատական ծախսերի բռնագանձման հարցը, գտնում է, որ «Դատաարվեստաբանական փորձաքննության եզրակացության» ծախսը, արժեքը 299.880 ՀՀ դրամը ենթակա է բռնագանձման հայցվորներից հօգուտ «Փորձաքննության ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության, որպես վճարման ենթակա գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով դատարանը.

#### Վ Ճ Ռ Ե Ց

Հայցվորներ Ռուզան Սարյանի, Կատարինե Սարյանի, Սոֆյա Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային իրավունքի խախտումը դադարեցնելու և ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին և Արաքսի Սարյանի հայցն ընդդեմ «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության՝ կոնտրաֆակտի օգտագործման արգելելու և կոնտրաֆակտի օգտագործմամբ ստացված եկամուտները բռնագանձելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Հայցվորներ Ռուզան Սարյանից, Կատարինե Սարյանից, Սոֆյա Սարյանից և

Արաքսի Սարյանից հոգուտ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության բռնագանձել 299.880 ՀՀ դրամ, որպես դատաարվեստաբանական փորձաքննության եզրակացության վրա կատարված ծախս՝ վճարման ենթակա գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱԿՈՐ Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	01-12-2009
<b>Ամսաթիվ:</b>	11-01-2010
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	11-01-2010
<b>Էջերի քանակը:</b>	1-ին հատոր-238 թերթ, 2-րդ հատոր-206 թերթ, 3-րդ հատոր-80 թերթ, 4-րդ հատոր-199 թերթ, 5-րդ հատոր-179 թերթ, 6-րդ հատոր-79 թերթ, 7-րդ -153 թերթ, 8-րդ -47 թերթ, 9-րդ-95 թերթ
<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	11-01-2010
<b>Էջերի քանակը:</b>	1
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	14-01-2010
<b>Էջերի քանակը:</b>	1
<b>Գործին կից նյութերը:</b>	գործը գտ է Արմավիրում
<b>Որ դատարան է ուղարկվել:</b>	
<b>Ուր է ուղարկվել:</b>	վերաքննիչ դատարան
<b>Ելքի գրության համար:</b>	143
<b>Դատական Գործ N: ՀՔԴ3/0398/02/08</b>	
<b>Ամսաթիվ:</b>	23-09-2009
<b>Ամսաթիվ:</b>	23-09-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
<b>Դատարանի անվանում:</b>	Արմավիրի մարզ

Դատավորի անուն:	Վահե Ռաֆայելի Խալաթյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	
<b>Ամսաթիվ:</b>	23-09-2009
<b>Ուր:</b>	Էջմիածին
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	18-08-2010
<b>Ամսաթիվ:</b>	18-08-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	Մանվել Մազմանի Սիմոնյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	21-08-2010
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	07-09-2010
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	21-08-2010
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	01-10-2010
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	07-09-2010
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	16:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	01-11-2010
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	01-10-2010
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:50
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	18-02-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	31-01-2011

<b>Այլ նշումներ:</b>	Գործի քննությունը հետաձգվել է 24.02.2011թ. ժամը 16 30-ին:
<b>Ժամ:</b>	12:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Ամսաթիվ:</b>	02-03-2011
<b>Հիմքը</b>	
<b>Հոդված</b>	ՀՀ քաղ. դատ.օր-ի 106
<b>Որոշման բովանդակությունը:</b>	Նշանակվել է արվեստաբանական փորձաքննություն:
<b>Ուր է ուղարկվել:</b>	
<b>Երբ:</b>	